

## ՍՈՒՐԻԱՆ ԱՐԱԲԱԿԱՆ ԼԻԿԱ ՎԵՐԱԿԱՐԶԱԲ

Եգիպտոսի մայրաքաղաք Գահիրեի մեջ 7 Մայիսին գումարուած նիստին, արաբական երկիրներու արտաքին գործոց նախարարները որդեգրեցին Սուրիոյ Արաբական Լիկայի մէջ իր աթոռը վերստանձնելու /8914/ թուակիր որոշումը:



Որոշումին համաձայն, Կիրակի, 7 Մայիս 2023-էն սկսեալ կը վերսկսի սուրիական կառավարական պատուիրակութիւններուն մասնակցութիւնը Արաբական Լիկայի խորհուրդի ժողովներուն:

Արաբ արտաքին գործոց նախարարները վերահաստատեցին Սուրիոյ հողային ամբողջականութիւնն ու կայունութիւնը պահպանելու նկատմամբ իրենց յանձնառութիւնը, ինչպէս նաեւ յայտարարեցին կազմութիւնը Լիբանանէն, Յորդանանէն, Սեուտական Արաբիայէն, Իրաքէն, Եգիպտոսէն ու Արաբական Լիկայի ընդհանուր քարտուղարէն կազմուած կապի յանձնախումբի մը, որուն պարտականութիւնը պիտի ըլլայ Օմանի հաղորդագրութեան գործադրութեան հետեւիլը, սուրիական կառավարութեան հետ ուղղակի երկխօսութիւնը շարունակելն ու սուրիական տագնապին համապարփակ լուծում գտնելը:

Նոյն օրը, Սուրիոյ Արտաքին Գործոց Նախարարութիւնը ընդգծեց. «Արաբական պետութիւններուն դիմագրաւած մարտահրաւերներուն դիմակայման համար երկխօսութեան եւ միացեալ աշխատանքի կարելորութիւնը», աւելցնելով. «Յառաջիկայ փուլը երկկողմանի եւ հաւաքական մակարդակներու վրայ երկխօսութեան, յարգանքի եւ հասարակաց շահերու հիմամբ արաբական ազդու գործելաձեւ կը պահանջէ»:

Նախարարութիւնը եզրափակելով ըսաւ. «Արաբական Լիկայի հիմնադիր անդամ Սուրիան կը վերահաստատէ արաբական միացեալ աշխատանքի եւ գործակցութեան ամրապնդման կարելորութեան վերաբերեալ իր մշտական դիրքորոշումը»:

Աւելցնելք, որ 12 տարի առաջ՝ 2011-ին, Սուրիոյ Արաբական Լիկայի անդամակցութիւնը սառեցուած էր:

## ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ՎԵՏԱՓՈՒՄ ԵՒ ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՍՏՆՈՐԱՐ ԳԵՐԸ. Տ. ՄԱԿԱՐ ԵՊՍ. ԱԶԳԱՐԵԱՆԸ

Երկուշաբթի, 8 Մայիս 2023-ին, ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետը Մայրավանքի գրասենեակին մէջ ընդունեց Բերիոյ հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Մակար Եպս. Ազգարեանը:

Առաջնորդ սրբազանը Վեհափառ Հայրապետին զեկուցեց թեմին կատարած աշխատանքները, յատկապէս երկրաշարժին պատճառով ստեղծուած դժուար պայմաններուն մէջ: Նորին Ս. Օծուութիւնը գոհունակութեամբ հաստատեց, որ առաջնորդ սրբազանին գըլխաւորութեամբ, Ազգային Իշխանութիւնը եւ քոյր կազմակերպութիւններու մարմինները հետեւողական ու նուիրեալ աշխատանք կը կատարեն օգտակար հանդիսանալու մեր ժողովուրդի կարիքներուն:



Հայրապետը միաժամանակ յիշեցուց, որ յատուկ կարելորութիւն անհրաժեշտ է տալ Զեսապի, Լաթաքիոյ, Ճեզիրէի եւ այլ շրջաններու մեր ժողովուրդի կարիքներուն, միշտ նկատի ունենալով առաջնահերթութիւնները:

Այս առիթով Հայրապետը իր բարձր գնահատանքը յայտնեց երկրաշարժին յառաջացուցած վնասներուն դարմանման ծիրէն ներս Սուրիոյ հայութեան կատարուող օժանդակութիւններուն՝ թեմերու, կազմակերպութիւններու ու ազգայիններու կողմէ եւ յիշեցուց, որ երբ մեր ազգին մէկ մասը կարիքը ունի օգնութեան, անհրաժեշտ է համազգային ճիգով օգտակար հանդիսանալ անոր:

## ԲԱԶՄԱՍԱՐԳ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԱԿԱՆ ՀԱՆՐԱՀԱԽՔ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԵՉ

9 Մայիսին, Ստեփանակերտի Վերածնունդի հրապարակին վրայ «Ո՛Չ Արցախի ցեղային գտումի» պահանջագիրի եւ ստորագրահաւաքի նախաձեռնող խումբի կողմէն կազմակերպուած էր բազմամարդ համաժողովրդական հանրահաւաք:

Հանրահաւաքին նախորդած էր Ստեփանակերտի Սուրբ Աստուածամօր Դովանիի Մայր Տաճարին մէջ տեղի ունեցած հոգեհանգըստեան արարողութիւն՝ ի յիշատակ Հայրենական մեծ պատերազմին, Արցախեան առաջին, Ապրիլեան եւ 44-օրեայ պատերազմներուն նահատակուած հերոսներուն, որմէ ետք տեղի ունեցած էր Խաչերթ դէպի Եղբայրական յուշահամալիր, ուր երթի մասնակիցները ուղղուած են դէպի Վերածնունդի հրապարակ՝ միանալով հանրահաւաքի մասնակիցներուն:



Հանրահաւաքին նպատակը յաղթանակներուն օրը վերաիմաստաւորելն էր նոր ուխտով՝ Արցախը հայկական պահելու սրբազան ուխտով:

Հանրահաւաքի ընթացքին ելոյթով հանդէս եկած են Արցախի թեմի Զրիստոնէական դաստիարակութեան եւ քարոզչութեան կեդրոնի տնօրէն արժանապատիւ Տէր Վաչագան Զահանայ Կիրճեան, «Ո՛Չ Արցախի Յե-

ղային Չտումին» պահանջագիրին եւ ստորագրահաւաքին նախաձեռնող խումբի անդամ Դաւիթ Պաղրեան, «Մենք ենք Մեր Սարերը» գործակալութեան համահիմնադիր, նախկին պետական նախարար Ռուբէն Վարդանեան, արցախեան 3 պատերազմներու մասնակից Զարմէն Աւետիսեան եւ երիտասարդներ:

Նախաձեռնողները տեղեկացուցին, որ թղթային եւ առցանց եղանակով հաւաքագրուած է 120.000 ստորագրութիւն, ինչպէս նաեւ ներկայացուցին Արցախը ապաշրջափակելու իրենց պահանջը, վերահաստատեցին հայրենիքի մէջ ազատ, անվտանգ ու անկախ ապրելու իրենց իրաւունքին տեր կանգնիլը, ցոյց տուին, որ Արցախը չի յանձնուիր եւ որ վըճ-

նական են՝ շարունակելու իրենց պայքարը, ինչպէս նաեւ զգօնութեան, սթափութեան, համախմբումի ու պայքարի կոչ ուղղեցին մեր բոլոր հայրենակիցներուն՝ Հայաստանի եւ աշխարհի մէջ:

Հանրահաւաքին մասնակցած են Արցախի ներկայ ու նախկին նախագահները, Արցախի Հանրապետութեան Ազգային Ժողովի պատգամաւորները:

Խմբագրական

ՇՈՒՇԻԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԴՐՈՇՄԸ

Շուշիի ազատագրման օրը մեզ կը մղե վեր առնել կրկին բերդաքաղաքի հայկական դիմագիծը, վերոյիշել անոր մշակութային վերելքի տարիները ու զգաստութեամբ հետեւիլ, թէ թուրք-ատրպէյճանական ինչպիսի՜ ճիգեր ի գործ կը դրուին անոր հայկական դիմագիծը բռնի ուժով աղաւաղելու եւ 1820-ականներէն իսկ արեւելահայոց եւ ողջ կովկասեան տարածաշրջանի մշակութային կեդրոն դարձած այս բերդաքաղաքի անելի քան 200 հայկական մշակութային կոթողները աստիճանաբար քանդելով հայկական Շուշին դարձնելու թրքական մշակոյթի մայրաքաղաք:

Փաստօրէն Արցախի 44-օրեայ պատերազմը հազիւ աւարտած, թուրք-ատրպէյճանական ծրագիրը անմիջապէս գործի կը դրուէր՝ առանց ժամանակ կորսնցնելու Շուշիի հայկական դիմագիծը փոխելու: 2022-ին Թրքական մշակոյթի միջազգային կազմակերպութիւնը կը փութար 2023-ին գրաւեալ քաղաքը հռչակելու թրքական աշխարհի մշակութային մայրաքաղաք:

Ինչո՞ւ կը կեդրոնանային յատկապէս Շուշիի վրայ: Որովհետեւ քաջ գիտէին անոր հայկական մշակութային հարուստ անցեալը ու հարկ կը զգային վերացնել հայկական հետքերը բացայայտ ճիգերով:

Անոնք չէին բաւարարուէր միայն Շուշիի դիմագիծը նենգափոխելով, այլեւ կը շարունակէին ամրագրել Ատրպէյճանի 44-օրեայ պատերազմէն ետք արձանագրած յառաջխաղացքը կարելի փութկոտութեամբ, որովհետեւ քաջ գիտէին, որ Արցախի կարգավիճակի հարցը չէ փակուած, ուստի բնակչութիւնը շրջափակման ենթարկելով ու արցախցիները գաղթի մղելով պիտի նպաստէին Արցախը հայաթափելու իրենց ծրագիրներուն ու հարցի կարգաւորումը աստիճանաբար ուղղէին դէպի անել ճամբայ:

Այո՛, Արցախի կարգաւորման հարցը կը մնայ անլոյծ, հետեւաբար արցախցիներուն ճակատագրին սպառնացող որեւէ ստորագրութիւն կամ յայտարարութիւն, աշխարհաքաղաքական ներկայ զարգացումներու պարտադրանքին տակ, որ պաշտօնական վերջնակէտը կրնայ ըլլալ Արցախի գոյութեան, զանց պէտք է առնուի ու արցախցիին գոյատեւման երաշխիքները ամրագրելու համահայկական աշխատանք տարուի այս փուլին:

Շուշիի կորուստը հետեւանք էր նաեւ տարածաշրջանին մէջ գերպետութիւններու ուժերու բախումին: Որեւէ պարտութիւն, սակայն, վերջակէտ չի կրնար դնել անլոյծ մնացած ու պայքարի ճամբայ նուաճած Արցախի հարցին:

Արցախցիին պայքարի դրօշը պարզած է ու իր ազատ ինքնորոշման իրաւունքը սակարկութեան առարկայ չի դարձներ:

Արցախցիին առանձին չէ, սակայն մեր բոլորին շօշափելի աջակցութեան կարիք ունի՝ գէթ պահպանելու իր գոյութիւնը մինչեւ Արցախի կարգավիճակին հարցը իր բարուք լուծումին հասնի:

Այս ժամանակաշրջանն է, որ կ'ուզեն օգտագործել Ատրպէյճանն ու Թուրքիան ու այլազան սպառնալիքներով Արցախի ժողովուրդը յուսահատութեան եզրին հասցնել:

«Գ.»

-Սուրիոյ նախագահ Պաշար ալ-Ասատ Սեուտական Արաբիոյ թագաւոր Սալման պըն Ապտուլազիզ ալ-Սեուտէն պաշտօնական հրաւեր ստացաւ՝ մասնակցելու Արաբական Լիկայի 32-րդ գագաթնաժողովին, որ տեղի պիտի ունենայ Ժառտայի մէջ, 19 Մայիսին:



Հրաւեր նամակը նախագահ Ասատին փոխանցեց Յորդանանի մէջ Սեուտական Արաբիոյ դեսպան Նայեֆ ալ-Սուտէյրին:

Իր կարգին, նախագահ Ասատ դեսպանին ճամբով իր ողջոյնները յղեց եւ շնորհակալութիւն յայտնեց թագաւորին՝ հրաւեր-նամակին համար, շեշտելով որ Արաբական Լիկայի յառաջիկայ գագաթնաժողովին գումարումը Սեուտական Արաբիոյ մէջ պիտի խթանէ արաբական միացեալ աշխատանքը՝ յանուն արաբ ժողովուրդներու ձգտումներու իրականացման:

- Չորեքշաբթի, 10 Մայիս 2023-ին, Մոսկուայի մէջ ընթացք առաւ Սուրիոյ, Ռուսիոյ, Իրանի եւ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարներու քառակողմ հանդիպումը:

Հանդիպման սկիզբը, Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրով յայտնեց, թէ Ռուսիա յոյսով է, որ այս ժողովը կը յաջողի Սուրիա-Թուրքիա յարաբերութիւններու կարգաւորման ճանապարհային քարտեզ ձեւաւորել:



Սուրիոյ արտաքին գործոց նախարար դոկտ. Ֆայսալ ալ-Մըքտատ շեշտեց, որ Սուրիոյ համար կարեւոր կը համարուին Թուրքիոյ սուրիական հողերու բռնագրաւման վերջ տալը եւ օտար, ապօրինի բոլոր ուժերուն քաշուիլը սուրիական տարածքներէն: Ապա անցնելով ըսաւ, որ եթէ այս իմաստով որեւէ յառաջխաղացք չարձանագրուի, շօշափելի արդիւնքի չենք հասնիր:

Նախարար Մըքտատ պարզեց Սուրիա-Թուրքիա յարաբերութիւններու կարգաւորման պայմանները, յատկապէս յիշելով Թուրքիոյ մէջ սուրիացի տեղահանուածներուն ապահով տունդարձը, սուրիական քարուղային հարստութիւններու թալանին դադարեցումը, երկու երկիրներուն սահմանային հսկողութեան կարգաւորումը, Սուրիոյ հիւսիսարեւելեան շրջանին մէջ զինեալ ահաբեկչական խմբաւորումներուն դէմ պայքարը, անոնց ուղղուած արտաքին աջակցութեան դադարեցումը եւ յատկապէս Սուրիոյ գերիշխանութեան եւ տարածքային ամբողջականութեան պահպանումը:

-Սուրիոյ, Ռուսիոյ, Թուրքիոյ եւ Իրանի արտաքին գործոց նախարարներուն հանդիպման եզրափակիչ հաղորդագրութեամբ հաստատուեցաւ Սուրիոյ ինքնիշխանութիւնը, տարածքային ամբողջականութիւնն ու ահաբեկչութեան դէմ պայքարը:



Հաղորդագրութեամբ միջազգային կառոյցներէն պահանջուեցաւ օժանդակել Սուրիոյ վերականգնումի աշխատանքներուն եւ տեղահանուածներու տունդարձին: Հաղորդագրութեան մէջ յիշուեցաւ նաեւ. «Յանձնարարել չորս արտաքին գործոց փոխնախարարներուն՝ ձեւաւորել Սուրիա-Թուրքիա յարաբերութիւններու կարգաւորման ճանապարհային քարտեզը եւ յառաջիկային բարձր մակարդակի շփումներն ու բանակցութիւնները կատարել քառակողմ ձեւաչափով»:

-Սուրիոյ Արտաքին գործոց նախարարութիւնը յայտարարեց, որ մեկնելով Սուրիոյ Արաբական Հանրապետութեան եւ Սեուտական Արաբիոյ խորարմատ յարաբերութենէն եւ երկու ժողովուրդներուն եղբայրական կապէն, հաւատարմով նաեւ արաբական երկիրներու յարաբերութիւններու ամրապնդման տեսլականին, Սուրիոյ Արաբական Հանրապետութիւնը որոշեց Սեուտական Արաբիոյ մէջ իր դիւանագիտական առաքելութիւնը վերսկսիլ:



Իր կարգին, Սեուտական Արաբիան եւս յայտարարեց, որ Սուրիոյ մէջ իր դիւանագիտական առաքելութիւնը պիտի վերսկսի:

-Սուրիական քաղաքային թռիչքներու հաստատութիւնը յայտարարեց, որ Չորեքշաբթի, 10 Մայիս 2023-էն սկսեալ Հալէպի Միջազգային Օդակայանէն ներս թռիչքները բանիլ պիտի սկսին: Երկուշաբթի, 1 Մայիսին Իսրայէլի կողմէ օդակայանի հրթիռակոծման հետեւանքով վնասուած կարգ մը բաժիններուն նորոգութեան աշխատանքները ամբողջացած են:



# Լուրեր Հայաշխարհին

## ԵՐԵՎԱՆ ԿԵ ԴԱՏԱՍԻՍԱՆԷ ԶԱԽՈՒՆԵՐՈՒՄԻՆ. «ՆԵՄԵՏԻՍ»-Ի ԱՐՉԱՆԻ ՏԵՂԱԳՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՐՅՆ Է

«Նեմեսիս» գործողության արձանը քանդելու մտադրություն չունի Երեւանի իշխանությունը, Երեւանի քաղաքապետարանն այսօրվա ընդհանուր ժողովում «Ազատություն» ձայնասփյուռի կայանին:

«Ազատություն»-ը հարցում ուղղած էր քաղաքային իշխանության, թե արդեօր հայաստանեան օդանավային ընկերություններու առջեւ օդային տարածքը փակել է ու թուրքիոյ մէջ բարձրացած աղմուկէն ետք Երեւանի իշխանութիւնը մտադրութիւն ունի՞ հեռացնելու «Նեմեսիս» գործողության նուիրուած արձանը, թէ օրակարգի վրայ նման հարց չկայ:



«Արձանի տեղադրումը Հայաստանի ներքին հարցն է եւ որեւէ մէկը իրաւունք չունի ատոր խառնուելու», Յաղթանակ գրասպասի մէջ գրոյցի ընթացքին յայտարարած է Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեան:

Յիշեցնենք, որ Թուրքիան Հայաստանի իշխանութիւններուն կոչ ուղղած էր կազմաքանդելու «Նեմեսիս»-ի յուշարձանը: Թրքական լրատուամիջոցները հաղորդեցին, որ այս մասին յայտարարած է Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մելլուր Չաուշօղլու: Անոր համաձայն, եթէ ատիկա տեղի չունենայ, ապա թրքական կողմը Հայաստանի դէմ սոր քայլերու պիտի ձեռնարկէ:

«Թուրքիան նախագրուչացուցած է Երեւանը եւ լրացուցիչ քայլերու պիտի ձեռնարկէ, եթէ յուշարձանը չկազմաքանդուի», ըսած է ան:

«Թուրքիան նախագրուչացուցած է Երեւանը եւ լրացուցիչ քայլերու պիտի ձեռնարկէ, եթէ յուշարձանը չկազմաքանդուի», ըսած է ան:

## «ԿԱՍԱԽՐԱԿԱՆ ՇԱՐՇՈՒՄ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ՆԱԽԱՁԵՌՆԱԾ Է 20 ՄԱՅԻՍԻՆ ԵՐԹԻ ԵՒ ՀԱՆՐԱՀԱԲԵԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿՈՌՆԻՉՈՐԻ ՄԷՋ

«Կասախրական Շարժում» Հասարակական Կազմակերպությունը նախաձեռնած է 20 Մայիսին երթի եւ հանրահաւաքի կազմակերպման Կորնիչորի մէջ:

Յայտարարութեան մէջ ըսուած է.

«Արցախը մերն է:

Արցախը Հայաստան է, Հայաստանը՝ Արցախ:

Բոլոր հայերը արցախցի են:

Ոտքի՛, տէր կանգնիւք մեր Արցախին:

Ոտքի՛, տէր կանգնիւք մեր իրաւունքներուն:

Ոտքի՛, մեր մէջքը ուղղենք:

Ոտքի՛, քանի դեռ չենք կորսնցուցած մեր արժանապատուութիւնը: Որպէսզի ցոյց տանք ամբողջ աշխարհին, որ հայ ժողովուրդը համաձայն չէ այն ամենուն, ինչ կը փորձեն իրեն պարտադրել:

Բոլորս, մէկ մարդու նման, 20 Մայիսին, ճիշդ ժամը 12:00-ին ըլլանք Կորնիչորի մէջ, բոլորս, մէկ մարդու նման յարգենք մեր ազատամարտիկները՝ ատելի քան 10000 զոհերուն յիշատակը եւ անոնց փոխարէն ըլլանք Կորնիչորի մէջ:

Ըլլանք Կորնիչորի մէջ յանուն Արցախին, ընդդէմ Ատրպէյճանի:


Մենք ենք մեր երկրին տէրը, տիրութիւն ընենք մեր երկրին, մեր Արցախին:

Բոլորս դէպի Կորնիչոր, դէպի Կորնիչոր՝ ի ցոյց դնելու մեր համախմբումն ու ընդվզումը, դէպի Կորնիչոր ըսելու համար, որ մենք ենք Արցախին տէրը, ժողովուրդն է Արցախին տէրը եւ ոչ ոք կրնայ անիկա զիջիլ, առեւտուրի նիւթ դարձնել, վաճառել կամ ուժով տիրանալ:

Կասախրութեան սկզբունքով բոլորս դէպի Կորնիչոր:

Կը հաւաքուիք 20 Մայիսին, ճիշդ ժամը 12:00-ին Կորնիչորի մէջ, մեր փոխադրամիջոցներով, մեր օրուան սնունդով:

**Կասախրական շարժում Հասարակական Կազմակերպութիւն»**



## ԱՄՐՏԱԾ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՋ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒ ՈՒՄՈՒՆԿԹԵՆԻ ՄԷՋ ՄԵԿՆԱՐԿԱԾ ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ուաշինկթընի մէջ աւարտած են Հայաստանի եւ Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարներու (Այտուհետեւ՝ ԱԳՆ) բանակցութիւնները:

ՀՀ ԱԳՆ-ն բանակցութիւններու աւարտին մասին յայտարարութիւն հրատարակած է, որուն մէջ մասնաւորապէս ըսուած է.

«Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյեանը եւ Ատրպէյճանի արտաքին գործերի նախարար Ճէյհուն Պայրամովը Մայիսի 1-4-ին Արլինկթոնում (ԱՄՆ Վիրժինիա նահանգ) անցկացրել են բանակցութիւններ:

Նախարարները հիւրընկալուել են ճորձ Շուլցի արտաքին գործերի ազգային ուսումնական կենտրոնում: Ուաշինկթոնում նախարարները հանդիպել են ԱՄՆ պետքարտուղար Էնթրի Պիլքընի եւ նախագահի օգնական եւ ազգային անվտանգութեան հարցերով խորհրդական Ճէյք Սալիւանի հետ:

Նախարարները ներկայացրել են իրենց տեսակետներն առկայ իրավիճակի շուրջ եւ իրենց դիրքորոշումներն են յայտնել յարաբերութիւնների կարգաւորման առնչուող գոյութիւն ունեցող խնդիրների վերաբերեալ:

Նախարարները եւ նրանց թիմերն «հաղադութեան եւ միջպետական յարաբերութիւնների հաստատման մասին» երկկողմ համաձայնագրի նախագծի որոշ յօդուածների շուրջ ունեցել են փոխըմբռնման առաջընթաց՝ միեւնոյն ժամանակ արձանագրելով, որ մի շարք առանցքային հարցերի շուրջ դիրքորոշումները մնում են տարամետ:

Երկու նախարարներն իրենց գնահատանքն են յայտնել ամերիկեան կողմին Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ բանակցութիւնները հիւրընկալելու համար: Կողմերը պայմանաւորուել են շարունակել քննարկումները»:

Աւելցնենք, որ ԱՄՆ պետքարտուղար Էնթրի Պիլքըն բանակցութիւններու աւարտէն յետոյ յայտարարած է, որ Հայաստանն ու Ատրպէյճանը բանակցութիւններուն մէջ «ըշտանակալի յառաջընթաց արձանագրած են»:

## ԱՐՉԱՆԻ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՌԻՆԵՐՆԵՐՈՒ ՊԱՇՏՊԱՆ. «ԱՏՐՊԵՅՃԱՆ ԴԻՏԱԽՐԵԱԼ ԿԵՐՊՈՎ ԿԸ ԽՈՉԸՆԴՈՏԷ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ»

Արցախի Հանրապետութեան մարդու իրաւունքներու պաշտպան Գեղամ Ստեփանեան յայտարարութիւն տարածած է, որուն մէջ առաւելաբար ըսած է.

«23 Ապրիլին Գորիս-Ստեփանակերտ մայրուղիին վրայ՝ Հաքարի կամուրջին քով, անօրինական հսկիչ անցագրային կէտ տեղադրելու վերջ, Ատրպէյճանի կողմէ արհեստական պատճառաբանութիւններով կը խոչընդոտուի Լեռնային Ղարաբաղի մէջ Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտէի բնականոն գործունէութիւնը, որով ատրպէյճանական կողմը ոչ միայն կ'ոտնահարէ միջազգային մարդասիրական իրաւունքի դրոյթները, այլեւ կոպտօրէն կը խախտէ շրջափակման ընթացքին ծայրայեղ ծանր առողջական վիճակի մէջ գըտնուող անձանց ՀՀ տեղափոխելու համար ձեռք բերուած համաձայնութիւնը:



Այսպիսով Ատրպէյճան ուղղակիօրէն կ'անտեսէ Մարդու Իրաւունքներու Եւրոպական դատարանի 21 Դեկտեմբեր 2022-ի որոշումը, որով դատարանը պարտք կը դնէր Ատրպէյճանին վրայ ձեռնարկելու բոլոր անհրաժեշտ եւ բաւարար միջոցները՝ ապահովելու Լաչինի միջանցքով Հայաստանի մէջ բժշկական օգնութիւն ստանալու կարիք ունեցող ծանր հիւանդ անձանց տեղաշարժը»:

Ապա ավելցուցած է.

«Ատրպէյճանական կողմը, նպատակ ունենալով ամբողջութեամբ մեկուսացնել Արցախը, նպատակաւորապէս գործողութիւններու կը ձեռնարկէ՝ խոչընդոտելու Նոյնիսկ մարդասիրական կազմակերպութիւններու գործունէութիւնը Արցախի մէջ՝ պարբերաբար արհեստական յաւելեալ պահանջներ ներկայացնելով»:

## ՆՈՐ ՃԱՆԱՊԱՐՅԱՅԻՆ ՔԱՐՏԷԶԻ ԳԱՐՏՆԱԲԱՌԸ

Արցախեան վերջին պատերազմէն ետք Մայիսեան եռատօնի կողմէն ա՛յլ նշանակութիւն ստացած է: Տօնական մթնոլորտը չբացած է հասկնալիօրէն: Որքան ալ եռատօնը կապուած ըլլար հայրենական պատերազմի յաղթանակին կամ պաշտպանութեան բանակի նուիրուած օրուան, այնուամենայնիւ ամէնէն շատ անկէկա կը յատկանշուէր Շուշիի ազատագրումով: 3իմա 8 Մայիսին վրայ պարտութեան, կորուստի ստուերը կայ ճնշիջօրէն, ինչ որ հիմնովին կ'այլափոխէ եռատօնով խորհրդանշուող յաղթանակներու խորհուրդը:

8 Մայիսը սակայն վերականգնումի համազգային յանձնառութեան օրուան պէտք է վերածել: Նոր դաւանանքի մշակման անհրաժեշտութիւնը հրամայական է, որուն իրացման մեկնարկը կը պայմանաւորուի Շուշիի վերագատագրումով: Շուշիի եւ Զադրուրի վերամիացումով միայն կ'ընկալուի Արցախի տարածքային ամբողջականութեան վերականգնման գործընթացը, որ իբրեւ համազգային առաջադրանք պէտք է յայտարարուի: Այս առաջադրանքին շուրջ պիտի միաւորուի ամբողջ ազգը, նախ վերականգնելու համար Արցախի տարածքային ամբողջականութիւնը եւ անով իսկ վերամրագրելու համար Զայաստանի Զանրապետութեան սահմանները:



Նոր հայեցակարգի համար կայ իրաւաբաղաքական կարելորագոյն հիմք: Խօսքը Արցախի Զանրապետութեան Ազգային ժողովի որդեգրած ապաբռնագրաման վերաբերող օրէնքին մասին է, որ ընդունուեցաւ Փետրուար 2022-ին:

Օրէնքը կը սահմանէ 1991-1994 եւ 2016 թուականներուն՝ Ատրպէյճանի եւ 2020 թուականին՝ Թուրքիոյ եւ օտար զինեալ ահաբեկիչներու անմիջական մասնակցութեամբ Ատրպէյճանի կողմէ Արցախի Զանրապետութեան վրայ իրականացուած ռազմական յարձակումին հետեւանքով բռնագրաւուած տարածքներու իրաւական կարգավիճակին եւ անոնց վրայ տարածուող իրաւական յատուկ դրութեան, պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմիններու, կազմակերպութիւններու գործունեութեան առանձնայատկութիւններու, մարդու եւ քաղաքացիի իրաւունքներու եւ ազատութիւններու, ինչպէս նաեւ իրաւաբանական անձերու իրաւունքներու եւ շահերու պահպանութեան ու պաշտպանութեան կապուած յարաբերութիւնները:

Այս բոլորի իրագործումը կը սկսի Շուշիի վերստին ազատագրումով: Մեր համազգային նոր երթի ահագնազ ղարձեալ Արցախէն պիտի հնչէ՝ վերամիաւորելու համար համայն հայութիւնը: Ստեփանակերտը համաժողովրդային հաւաքներով փաստեց, որ Արցախը միահամուռ կը մերժէ որեւէ պարտադրուող համաձայնութիւն:

3իմա, սեղանին վրայ դրուած փաստաթուղթերու նախագիծերու քննարկման առիթով կը յանկերգուին Լեռնային Ղարաբաղի ժողովուրդի անվտանգութիւնն ու իրաւունքները ապահովելու նոր գործիքակազմերու ներդրումներու անհրաժեշտութեան մասին տեսութիւններ: 3ամայն հայութիւնը պարտաւոր է յայտարարել, որ չկայ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդի հասկացութիւն: Կայ Արցախի Զանրապետութիւն, որուն ժողովուրդը ինքնորոշուած է, ճշդած իր տարածքները ամէնէն ժողովրդավար եղանակներով եւ միջազգային իրաւաչափութիւններու յարգումով:

Ազգերու ինքնորոշում կամ Արցախի Զանրապետութիւն եզրերէն խուսափիլը նշանոցի իջեցման համագործակցելու եւ Երեւանի պետական ներկայացուցիչներուն կողմէ:

Տարիներ առաջ Դաշնակցութեան կողմէ առաջադրուած 3այաստանի Զանրապետութիւն- Արցախի Զանրապետութիւն ռազմաքաղաքական դաշինքի կնքումը այսօր տարբեր դիրքերէ եւ իրական կարգաբանութիւններէ խօսելու կարելիութիւն կ'ընձեռնէր հայկական կողմին:

Նոր ճանապարհային քարտեզի գծագրումը անհրաժեշտ է ու հրամայական: Քարտեզ, որուն առաջին փուլը Շուշին է. ապա 3ադրուրը, ապա Արցախի բռնագրաւուած տարածքները: Այդ քարտեզի հիման վրայ մեր համազգային ուղեւորութիւնը կը յանգի Արցախ-Ատրպէյճան եւ 3այաստան-Ատրպէյճան սահմանագատումի եւ սահմանագծումի՝ հայաստանեան գերիշխան տարածքներէ ատրպէյճանական գօրքերու հեռացումով պայմանաւորուած:

Ճանապարհային նոր քարտեզի գծման համար Արցախի Զանրապետութեան Ազգային ժողովը ապաբռնագրաման օրէնքի որդեգրումով փոխանցած է ճանապարհային քարտեզի գծագրման գաղտնաբառը:

Այս նոր գործընթացի առաջին նուաճելի կէտը Շուշին է: 8 Մայիսը այսուհետեւ Շուշիի վերստին ազատագրումով մեկնարկելի նոր գործընթաց պիտի խորհրդանշէ:

Խմբագրական «Ազդակ»-ի

## ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ՎԵՆԱՓԱՌ ՆԱՅՐԱՊԵՏԸ ԺԱՄԱՆԵՑ ԲՈՒԷՅԹ

«Սփիւռքի Տարի»-ի ընթացքին ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ 3այրապետին կողմէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թեմերուն կատարուող հովուապետական այցելութիւններու շրջագիծէն ներս, այսօր՝ Երեքշաբթի, 9 Մայիս 2023-ի առաւօտուն, Վեհափառ 3այրապետը ժամանեց Զուլթի եւ միջազգային օդակայանին մէջ պաշտօնապէս դիմաւորուեցաւ Զուլթիի եւ Շրջակայից 3այոց Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ Գերայ. Տ. Պետրոս Ծ. Վրդ. Մանուէլեանի, Զուլթիի մօտ Լիբանանի դեսպան Ահմատ Արաֆայի, 3այաստանի 3անրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Սարմէն Պաղտասարեանի, Ծոցի երկիրներու Պապական Նուիրակ Եունիս Արք. Նիւնընթի, Զուլթիահայ ազգայիններու եւ մարմիններու ներկայացուցիչներու կողմէ:



Նշենք, թէ Վեհափառ 3այրապետը Զուլթի կը ժամանէ հնգօրեայ հովուապետական այցելութեամբ, որուն ընթացքին Նորին Ս. Օծութիւնը պիտի ունենայ պաշտօնական հանդիպումներ, պիտի այցելէ Զուլթիի հայկական կառոյցներուն, հանդիպում պիտի ունենայ Զուլթիի մէջ գործող եկեղեցիներու առաջնորդներուն, ինչպէս նաեւ Զուլթիի եւ Շրջակայից 3այոց Թեմի ժողովուրդին, ազգային մարմիններուն եւ յարակից միութիւններու ներկայացուցիչներուն հետ:

## ԲՈՒԷՅԹԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՆԱՄԱՅՆՔՆԵՐՈՒ ՆԱԲԱՔԱԿԱՆ ԱՂՕԹՔ՝ ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ՎԵՆԱՓԱՌ ՆԱՅՐԱՊԵՏԻ ՆԱԽԱԳԱՆՈՒԹԵԱՄԲ

Զուլթիի եւ Շրջակայից 3այոց Թեմին շնորհած 3ովուապետական Այցելութեան առաջին օրուան՝ Երեքշաբթի, 9 Մայիս 2023-ի երեկոյեան, ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ 3այրապետին նախագահութեամբ տեղի ունեցաւ միջ-եկեղեցական Շնորհակալական Աղօթք՝ Զուլթիի յոյն ուղղափառ եկեղեցւոյ մէջ:



Սոյն հաւաքական աղօթքը կազմակերպուած էր Զուլթիի Եկեղեցիներու առաջնորդներուն կողմէ: Արդարեւ, յոյն ուղղափառ եկեղեցւոյ յարկին տակ ներկայ էին հայ եւ եօթը այլ քրիստոնէայ համայնքներու՝ յոյն ուղղափառ, յոյն քաթօլիկ, ղըպտի ուղղափառ, ղըպտի քաթօլիկ, աւետարանական, լատին եւ մարոնիթ առաջնորդներն ու հաւատացեալներու հոծ բազմութիւն մը:

Այս առիթով յանուն Անտիոքի յոյն ուղղափառ պատրիարքին բարի գալուստի խօսք արտասանեց Զուլթիի յոյն ուղղափառ համայնքի առաջնորդ Մեթրոպոլիտ Ղաթթաս 3ազիմ եւ ողջունեց ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոսի այցը Զուլթի:

Իր պատգամին մէջ, Վեհափառ 3այրապետը իր խոր գոհունակութիւնը յայտնեց ի տես քրիստոնէայ համայնքներու վայելած լայն ազատութեան Զուլթիի մէջ, ուր կրօնական համակեցութեան գեղեցիկ մթնոլորտ մը պարզուած է շնորհիւ երկրի ղեկավարութեան եւ ժողովուրդի: Նորին Սրբութիւնը նաեւ շեշտեց, որ քրիստոնէական համայնքները քրիստոսով մէկ եկեղեցի են, եւ անսալով քրիստոսի պատուէրին պէտք է աղօթքով, խորհրդակցութեամբ ու գործակցութեամբ արտայայտեն եկեղեցւոյ ամբողջական միութիւնը:

Արարողութեան աւարտին հաւատացեալները մասնակցեցան աջա-համբոյրի եւ բարի գալուստ մաղթեցին Վեհափառ 3այրապետին:



## Թուրքիոյ նուրջ

### ՔՐԸՉՏԱՐՈՂՈՒՄ ԵՆ «ՉԱՆՊԵՉՈՒՐԻ ՄԻՋԱՆՅՔ»-Ի ԱՅԼԵՏՐԱՆՔԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

Յառաջիկային նախատեսուող Թուրքիոյ խորհրդարանական եւ նախագահական ընտրութիւններուն երտողանի հիմնական մրցակից, ընդդիմութեան միասնական թեկնածու Բեմալ Բըլըչտարօղլու 6 Մայիսի երեկոյեան քարտեզ մը հրապարակած է, որով առաջարկած է շրջանցել «Չանգեզուրի միջանցք»-ը ու թրքական աշխարհը միաւորելու համար այլընտրանքային ուղի ընտրել: Այդ քարտեզին մէջ Ատրպէյճան ընդհանրապէս տեղ չէ գտած:



Այդ մասին, Akunq.net-ի փոխանցումով, յայտնած են թրքական լրատուամիջոցներ:

Աղբիւրին համաձայն, Բըլըչտարօղլու քարտեզը ներկայացնելու պահուն շեշտած է, որ անիկա «իր կեանքի ամենամեծ նախագիծն է» եւ գայն կոչած է «Թրքական ճանապարհի ծրագիր»: Բըլըչտարօղլուի այս առաջարկը վրդովմունք յարուցած է Ատրպէյճանի խորհրդարանի պատգամաւորներուն եւ այլ քաղաքական գործիչներու քով:

Մասնաւորապէս Ատրպէյճանի պատգամաւոր եւ «Արեւմտեան Արտրպէյճանի հաւաքականութեան» փոխնախագահ Յիքմեթ Պապասօղլու, անդրադառնալով Բըլըչտարօղլուի առաջարկին, շեշտած է. «Իրանի վրայէն դէպի Չինաստան դուրս ելող ուղին ոչ թէ պիտի միաւորէ թրքական աշխարհը, այլ՝ ընդհակառակը՝ պիտի մասնատէ: Բանգի մեզ թուրքերուս, միաւորող միակ ճանապարհը այն գիծն է, որ անցնելով Չանգեզուրի միջոցով՝ կ'երկարի մինչեւ երթայրական հանրապետութիւններ: Անոր այդ նախագիծէն պիտի շահին Ռուսիան, Իրանը եւ ամենաշատը՝ Չայնաստանը, իսկ թուրքերը պիտի կորսնցնեն: Բըլըչտարօղլուի քարտեզը թուրքերը ոչ թէ միաւորելու, այլ մասնատելու դրսեւորում է: Չանգեզուրի միջոցով կուսակցութեան առաջնորդը Ատրպէյճանը պատժելով մեծ շահ կ'ապահովէ հայերուն»:

Ատրպէյճանցի պատգամաւորը նաեւ իշեցուցած է, որ Չանգեզուրի միջոցով կուսակցութիւնը (CHP) վերջերս մօտեցած է Ժողովուրդներու Դեմոկրատական Կուսակցութեան (HDP), ապա անելուցած է, որ մտահոգութիւն կայ այն առումով, որ եթէ Բըլըչտարօղլու Թուրքիոյ մէջ իշխանութեան գայ, դարձեալ քննարկման առարկայ պիտի դարձնէ Ղարաբաղի հարցը եւ «Շուշիի հռչակագիրը»:


Մէկ այլ ատրպէյճանցի քաղաքագետ՝ Էլչին Միրզապէյօղլու, անդրադառնալով Բըլըչտարօղլուի քարտեզին ընդգծած է. «Բըլըչտարօղլու այդ քարտեզով բազմաթիւ տեղեր ուղերձ յղեց: Բանգի ան եւս կը գիտակցի, որ Չանգեզուրը միայն ցամաքային եւ երկաթուղային ճանապարհ չէ, անիկա նաեւ ուժանիւթի ուղի է: Թրքական աշխարհը միաւորող միջանցքը Չանգեզուրի ճանապարհն է: Պարոն Բեմալի յայտարարութիւնները միայն արտայայտած են հայկական թեզերը: Ան շատ լաւ գիտէ, որ պարսկական աշխարհը կ'երդրոն դարձնելով՝ բացուելիք այդ գիծէն պիտի շահին ոչ միայն թուրքերը, այլեւ՝ Իրանը, Ռուսիան եւ հայերը: Թրքական աշխարհը իրարու Իրանի վրայով կապելը կը նշանակէ թէ՛ ճանապարհը հազարաւոր քիլոմետրերով երկնցնել, եւ թէ՛ այդ ուղիին մէջ տարբեր գործընթացներ ընդգրկել: Իսկ ամենակարեւորը այն է, որ եթէ Չանգեզուրի միջանցքը սկսի գործել, կը նշանակէ, որ հայերը այլեւս չեն կրնար այդ տարածքներուն մէջ իրենց անիրաւացի շահոյթը ունենայ: Բըլըչտարօղլուի ներկայացուցած ուղին թուրքերու թշնամիները գծած են: Ժամանակին Ատրպէյճանին 2 ուղղաթիռ Նոյնիսկ չ'տուած անձեր հիմա կը ձգտին կտրել Ատրպէյճանի կապերը թէ՛ արեւմտեան աշխարհի եւ թէ՛ Թուրքիոյ հետ: Պարոն Բեմալը բացայայտ ըսաւ՝ «Պիտի պատժել Ատրպէյճանը»: Մենք կ'ընենք՝ ան թող այդ քարտեզը ծալէ եւ իր գրպանը դնէ: Չետագային իր թոռներուն ցոյց կու տայ: Մենք Չանգեզուրի միջանցքը բանալով՝ պիտի խանգարենք Թուրքիոյ հետ անոր խաղը»:

«Գանձասար» շնորհակալութեամբ ստացաւ Սալբի Բիլէճեանի-Եթերեանի հայերէն թարգմանութեամբ

«ԱՐԺԱՆԻՔՆԵՐ»

գիրքը, հրատարակութեամբ տպարան «Արեւելք»-ի: Հայէպ, 2023:

## ԿԵԱՆՔԻ ԴՊՐՈՑԷՆ ՅԻՇԵՑՈՒՄՆԵՐ



Խորեն Քիւյ. Պերթիզեան

Ժամանակը նպատակ իրագործելու դրամագլուխ է եւ կեանքը արժեւորելու ուսկի առիթն է:

Ապրողներս ժամանակը օգտագործելու կարելիութիւն ունինք: Շատեր կ'այրին, սակայն ժամանակը կը «սպանեն», այսինքն կը վատնեն:

Յիւանդանոց այցի գալով առողջութեան արժեքը կը գիտնանք: Բանտ այցելելով ազատութեան արժեքը կը գիտնանք: Գերեզման երթալով հարկ է կեանքին արժեքը գիտնալ:

Մարդիկ ինչ-ինչ պատճառներով քեզի ականջ տալու տրամադրութիւն չեն ունենար: Մի՛ այպաներ, եթէ խօսիս հաւանաբար սխալ հասկնան կամ Նոյնիսկ ծիծաղին: Ուրեմն երբեմն լուռ մնալը իմաստութիւն է:

Շատերու համար դրամասիրութիւնը եղած է կուռք, պաշտամունքի առարկայ, անբուժելի մոլութիւն, շահ փնտռելու անյագ ցանկութիւն եւ երկինքը մոռնալու դրդապատճառ:

Կարդալու փափաք ունեցողը հայապահպանման կամաւոր գիտնոր է:

Կարդալով կը սորվինք, սորվելով գիտելիք կ'ամբարենք, որպէսզի շահեկան գաղափարներ բաժնեկցինք:

Աղօթքը մեր տկարութիւնը խոստովանելու եւ Տիրոջ զօրութեամբ վերնորոգուելու ազդու միջոց է:

Խօսքի սահմանին մէջ եթէ մնանք՝ մեր խօսքին եւ գործին միջոցը անելի հեռացուցած կ'ըլլանք:

Երագանքը փափաք է, ցանկութիւնը՝ կամեցողութիւն, ձգտումը՝ պայքար:

Նպատակը ուղի է, իսկ տեսիլը՝ առաքելութիւն:

Կեանքի գեղեցկութիւնը սերն է, իսկ կեանքի վայելչութիւնը՝ սիրելը: «Ես»-ին ստորուկը «մենք»-ին թշնամին է: Աթոռին ծառան «մենք»-ին հակառակորդն է:

Կիրքերու ենթակայ եղողը ազատութիւնը սանձարձակութեան կը վերածէ: Յուսահատիլը ձեռով մը անձնասպանութիւն է:

Յոյսը ետ կանգնելու կը հրաւիրէ եւ տոկոսն կամքով հաւատքի բարի պատերազմը մղելու կ'առաջնորդէ:

Յոյսը եթէ գոյութիւն չ'ունենայ՝ գոյատեւելու մեր ուժը կը սպառի:

Յոյսով ապրողը խաչին ընդմէջէն կը տեսնէ Յարութեան յաղթաբեր Կիրակին:

Կուտակուած մեղքերը ազատութիւնը կը կաշկանդեն: Սխալ ընթացք մը եթէ շարունակուի՝ մարդուն սիրտը մեղքի գործարանի կը վերածուի:

Աստուածաշունչին կանչը սրինգ է հովուական, պատգամ է Տերուսական եւ ձայն է ճշմարտութեան:

Անկուշտ աչքով ապրողը նախքան սեղանէն ուտելը՝ հացի փշրանք եւ նախքան աղբիւրէն խմելը՝ ջուրի կաթիլ կը փնտռէ:

Միտքը ծննդավայրն է լուսեղէն գաղափարներուն: Շահեկան գործին հիմքը առողջ եւ պայծառ միտքն է:

Միտքը կայծ է, կամքը՝ կրակ, գործը՝ հրդեհ:

Ողջմիտ հաւատք ունեցողը ճշմարիտը կեղծէն կրնայ գանազանել եւ չարին խաբէբայ հնարքները խստիւ մերժել:

Միտքը խոհանոց է, գաղափարները՝ ճաշասեղան, ծրագիրները՝ ճաշատեսակ, գործի լծուիլը՝ ախորժակ եւ ձիրքերը՝ համեմունք:

Սկզբունքներ կան, որոնք որք մնացած են, ոչ ոք որդեգրած է գանակը: Դրական մտայնացումներ կան, որոնք «վիժում»-ի ենթակայ եղած են ժխտական մարդոց կողմէ: Այս ալ բարոյական ոճիր է:

Ինքնահաւանը կը կարծէ թէ իր ներկայ գտնուած տեղը բեմ է, իսկ շուրջինները՝ հանդիսատես:

Մեծամիտը կը ցանկայ որ ամէն օր մարդիկ իրեն համար մեծարանքի երեկոյ կազմակերպեն:

Երիտասարդութեան օրերը եթէ ըլլան պտղաբեր աշխատանքի շրջան, ծերութեան ժամանակ գոհունակութիւն պիտի գգաս:

Յաճախ շատ կը սխալինք, բայց քիչ կը գոջանք: Երբեմն քիչ կը սխալինք եւ շատ կը գոջանք: Ուրեմն խիղճը կարիքը ունի դաստիարակութեան, որպէսզի ճիշդ դատէ, առողջ քննադատէ եւ գոյշանայ չափազանցութենէ:

Ուղիղ դատողութիւն եթէ չկայ՝ կեղծաւորին կ'ընենք ճկուն է, անամօթին՝ համարձակ, չափ ու կշիռք չունեցողին՝ ազատ արտայայտուող:

Ներդրութիւնները կը յուշեն, թէ աշխարհի մէջ կատարեալ հանգստութիւն չկայ: Միայն յաւիտենական կեանքին արժանի եղողը պիտի վայելէ մնայուն հանգստութիւն եւ անանցանելի երանութիւն:

Խիղճ-սեր= անօրէնութիւն (Տես Ա.Տմ 1.5)

Ազատութիւն-սեր=սանձարձակութիւն (Տես Գղ 5.13)

Գիտութիւն-սեր=հպարտութիւն եւ ոչնչութիւն (Տես Ա.Կր 8.1 եւ Ա.Կր 13):



Պրիմալետ

ԴԱՍԸՆԿԵՐՍ ԶԵՐ



Մարուշ Երամյան

Թեև դասընկերս չէր, բայց Յարութը ծանօթ էր ամբողջ Ճեմարանին մէջ իր քանդակագործի հռչակով եւ լռակեացութեամբ: Եթէ նայէիր դէմքին, կը գգայիր որ իր աշխարհին մէջ է, բայց երբեք չէիր կրնար գիտնալ, թէ ի՞նչ կը մտածէ, ի՞նչ ծրագիրներ կ'որոճայ: Յետոյ, եթէ հետեւէիր իր աշխատանքներուն, տեղ մը, ձեւով մը պիտի տեսնէիր իր յաջորդ գործը: Արուեստագետներու ընտանիքի մը առաջին գաւազն, մեծցած է



արուեստով եւ կենցաղավարութեամբ յագեցած մթնոլորտի մը մէջ: Այս երկրորդ մանաւանդ այնքան հագուազիւտ բան էր մեզի համար, որ անմիջապէս աչքի կը գարներ իր ծայրայեղօրէն քաղաքավար խառնուածքը:

Իր եղբոր Տիգրանին պէս, ինք եւս ներկայ էր «Ծիլեր»-ուն իւրաքանչիւր թիւին մէջ կա՛մ երգիծանկարներով, կա՛մ իր նոր քանդակին լուսանկարով: Կը նկարագրէր մեր գրութիւնները նաեւ: Կը յիշէմ, որ «Նամակ Միրէյ Մաթեօին» խորագրով պատմուածք մը գրել էի եւ Յարութը այդ ֆրանսացի երգչուհիին, - որ այն օրերուն շատ հռչակաւոր էր եւ մեր շատ սիրելի երգչուհին, - դիմանկարը գծել էր խորագրին կողքին:

Քանի մը դասարան մեծ էր ինձմէ: Երբ արարտեց Քարեն Եփփէ Ազգային ճեմարանը, մեր սիրելի ճեմարանը, ա՛լ չիմացայ իր մասին: Գիտէի որ անախապահ ընտանիքէ մը կու գար եւ կը մտածէի թէ ինչպէ՛ս պիտի շարունակէ քանդակագործութիւնը այսքան նորօրէն գործիքներով մէջ...

Յետոյ տեսայ իր LinkedIn-ի էջը, ուր յստակօրէն Յարութը գրել է թէ ի՞նչ կ'ընէ այսօր իր արուեստով:

«Ծաղրանկարը ինձի համար արուեստի աշխարհի մտնելու սեմն էր: Քանի որ ես արդէն ունէի ծաղրանկարչութեան հակում եւ կիրք, սկսայ փնտռել ուղիներ, որոնց միջոցով երգիծանքը կարելի ըլլար կիրարկել նկարչութեան եւ քանդակագործութեան մէջ: Միջոցներ կը փնտռէի արուեստի յաճախ առանձին ներկայացուող երեսակները միաձուլելու համար:

Դասակարգած ճանապարհներէ գալով, կարելի է ըսել, որ իմ արուեստը կը կատարելագործէ ժամանակակից արուեստի եւ երգիծանկարչութեան միախառնումը, փորձ մըն է նոր բառապաշար ստեղծելու եւ նոր տարածք նուաճելու, հարուստ անաղութիւններու եւ նորարարական արուեստի կիրարկումին մէջ:

Օգտագործելով քանդակային հեռանկարը եւ ձեւի խեղաթիւրումով յատկանշուած երգիծանկարչութիւնը, կը փորձեմ ակնդիրը հեռացնել կեանքի գրգռիչ երեւոյթներէ եւ հիասթափութիւններէ, եւ դրական հանդիպումներու պատուհաններ բանալ:

Ես գոյները կ'օգտագործեմ ստեղծելու համար որոշ ապրումներ եւ տրամադրութիւններ, որոնք կը վերաբերին գործերուս մէջ գտնուող բնորոշներուն կամ վիճակներուն: Օրինակ՝ վարդագոյնը տազնապի համար, կանաչը՝ հանգստութեան համար եւ այլն: Վրձնահարուածներս կ'օգտագործեն խաչածէ թեքիք, եռատարածք (3D) խորութիւն հաղորդելու նկարներուս, ինչպէս նաեւ յղում տալու Վան Կոկին»:

Երբ տեսայ իր վերջին շրջանի քանդակները, անկեղծօրէն հիացած էի ոչ միայն իր ստեղծագործ ոգիով, այլ նաեւ ժամանակին հետ քայլ պահելու իր կարողութեամբ: Իր նոր քանդակները, նախ փոքր չափի, Յարութը կ'իրագործէ 3D printer-ով, ապա, ըստ չափի եւ ըստ պահանջի, կ'իրագործէ իսկական չափով քանդակներ: Եւ ոչ միայն:

Իր նոր շրջանի շարքը շատ հետաքրքրական մտայնացումներ ունի, որոնց թեման եթէ արդիական է, բայց անոնց միջոցը ներշնչուած է... մեր խաչքարերու նախշերէն: Ասոր վառ օրինակն է «Գովաբանութիւնն Խաչքարի» (Tribute to Khachkar) աշխատանքը:

Արուեստի մասին երբ կը խօսիմք, յաճախ կը գգանք թէ բառերը բաւարար չեն նկարագրելու համար ոչ թէ արուեստի գործը ինք, այլ անոր մեր վրայ ձգած ազդեցութիւնը, որ թեւ շատ ենթակայական է՝ իւրաքանչիւրը ըստ իր եւրթեան, - եւրթին բառը այստեղ ամբողջ բարդ համակարգ մըն է հոգեբանութեան, խառնուածքի, գարգացումի եւ այլն, - սակայն կը մնան կարգ մը ընդհանրութիւններ, որոնք կը կապեն ակնդիրները եւ կը նկարագրեն արուեստը:

Այստեղ կրնամ ձեռքի նկարագրել Յարութին գործերը, որոնք իրապէ՛ս արդիական են, ճի՛շդ իր ըսած ձեւով՝ միջոցներու միաձուլումով: Առնենք օրինակ իր «Քոչարի»-ն:

Պղնձածոյլ իրար ազուցուած խաչերու ամբողջութիւն մը, որ իր մէջ կը կրէ հայկական նախշերու քնքնութիւնը, միաժամանակ հսկայ ոյժ մը պարփակելով՝ հաւաքականութեան ոյժը:

Կամ առնենք «Կռունկ»-ը, որ պատկերներու յաջորդականութիւն մըն է, Կոմիտասեան Կռունկին հնչիւններով. տեսերիզ մը, որուն սկիզբի գրութեան մէջ Յարութ կ'ըսէ.

«Նաւասարդը հայերուն ամենէն սիրելի տօնն էր, հին ժամանակներէն սօսուած, որուն ընթացքին պարեր, երգեր, մրցումներ տեղի կ'ունենային՝ ձիարշաւ, ըմբշամարտ, նշանառութիւն, ջուրի խաղեր, բախտագուշակութիւն, կենդանիներ կը գնէին եւ այլն. ուտելիքն ալ մեծ տեղ կը գրաւէր այդ տօնին ընթացքին»:

«Չայեր, որոնք հեռու եղած են հայրենիքէն, մանաւանդ Նոր Տարուան առիթով անպայման կ'ուզեն իմանալ իրենց սիրելիներուն մասին. իսկ Կռունկը, որ գաղթող թռչուն մըն է, դարձել էր անտարբերը պանդուխտներուն. ամէն անգամ որ կռունկ մը տեսնէին երկնքին վրայ, իրենց կը թուէր թէ անպայման լուրեր բերած էր իրենց սիրելիներէն»:

«Չայերը կռունկին շատ երգեր, տաղեր եւ բանաստեղծութիւններ նուիրած են, իսկ նկարներու այս շարքը իմ հայեցողութեամբ կռունկին պատասխանն է իրեն տրուած հարցերուն», կ'ըսէ արուեստագետը:

Պատկերացուցէ՛ք թէ քանի քանիներ կ'այցելէն Յարութ Թնկըրեանի կայքէջը. այդ այցելումներուն մեծամասնութիւնը հայ չէ, բայց անոնք հմայուած արուեստի գործերով, կը կարդան ներկայացուածը եւ անուղղակի կերպով այնքան բան կ'իմանան մեր մասին: Արուեստի գործիւններէն մէկն ալ այս է՝ ըսել ու պատմել առանց բառի, համոզել առանց վիճելու, երբեմն Նոյնիսկ ընկալողին առանց գիտակցութեան:



Քոչարի

«Կռունկ»-ը 1,42 վայրկեան տեսողութեամբ տեսերիզ մըն է, շարք մը իրար յաջորդող 16 նկարներու, որոնց խորագիրները արդէն երբ քով-քովի դրուին, մեր՝ սփիւռքահայու այսօրուան կեանքին մասին կարճ պատմուածքի մը երեւոյթը կը ստանան, այսպէս:

Տունէն լուր կա՛յ, կռունկ, խորոված, կրակէն անելի տաք, կարդացուելու սպասող գաւաթներ, ոչխարը կ'որոշէ խորովածին տեսակը, մրցումէն առաջ կառանել (parking), թռչակառուն, ի՞մ ուղիս թէ մայրուղին, երիտասարդ աղջիկներ, միասնութիւն բազմազանութեան մէջ, խաղին յաղթել (ճատրակ) բայց պատերազմը կորսնցնել, կը մրցի՞ն թէ կը կռուին, ո՞ր է հաւատքը, պար, Վարդավառ, երագել ...

Այլ գեղեցիկ գործ մըն է «սաղմոս 23» գեղանկարը:

Իր բոլոր նկարներուն մէջ կը գգացուի թաքուն երգիծանք մը, որ վառ գոյներուն միացած պայծառութիւն կու տայ, թեւ ներկայացուածը երբեմն որպէս նիւթ այնքան ալ պայծառ չըլլայ, ինչպէս է պարագան «Կռունկ» պատկերաշարին:

Նկարներէն անկախ վերջերս Յարութ իր քանդակները կ'իրագործէ թուայնացումի միջոցով, եւ կը ցուցադրէ գաւաթէ պատարանի վրայ, քանդակին չորս կողմը պտղտեղով այնպէս, որ ակնդիրը կ'ունենայ տպաւորութիւնը ինք քանդակին շուրջ դառնալուն:


Այլ հետաքրքրական գործ մըն է «Պատմական Չայր» թուայնացուած քանդակը՝ կարծմբուն կերպար մը, որ ձեռքին ունի մեր յաւերժութեան նշանը:

Յարութ Թնկըրեան Չայլեպի համալսարանին երկրաչափական կաճառը (Civil Engineering) արարտել է տեք, գերագանց գնահատանքով արարտել է նաեւ Նիւ Եորքի նշանաւոր New York Academy of Art-ը, քանդակագործութեան մագիստրոսական աստիճան ստանալով, 2000 թուականին:

Կ'արժէ այցելել Յարութ Թնկըրեանի գործերը LinkedIn-ի մէջ (Harout Tenguerian) եւ ծանօթանալ այս անունին, որ իրապէ՛ս ժամանակին հետ քայլ պահող արուեստագետ մըն է, արժանի անելի լայն ճանաչումի:

## Երիտասարդական Ոսպնեակ

### ԵՒ ՊԱՅՔԱՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ՝ ՀԱԼԷՊԷՆ ԵՐԵՒԱՆ



Ժիրայր Կարապետյան

Ապրիլ ամիսը բոլորովին տարբեր ամիս մըն է մեզի համար: Ամիս մը, երբ հայրությունը ինքզինք, իր էությունն արմատներուն կը դառնայ: Ամիս մը, երբ պայքարի գաղափարը ինքնագիտակցության խթանման հիմք կը դառնայ:

Փոքր տարիքէս դպրոցական գրասեղաններուն ետեւ նստած եւ միութենական աշխատանքներուն մէջ յաճախ լսած եմ պայքար բառը, բայց բառին ամբողջական եւ ճշգրիտ իմաստը ըմբռնած եմ, երբ սերտելով պատմությունը եւ ապրելով ներկան, անոնց միջեւ գոյություն ունեցող կապը ամրապնդել փորձած եմ: Ակումբն ու դպրոցը մեծ դեր ունեցած են ինքնութեանս պահպանման ու ազգային գիտակցութեան ձեւաւորման մէջ:



Հալէպի մէջ Հայոց Յեղասպանութեան ոգեկոչման արարողությունները տեղի կ'ունենան քանի մը փուլերով՝ յուշ երեկոներ, ծաղկեմատոյց եւ այլն: Վերջին տարիներուն մեծ ընդունելութիւն գտած էր ժողովրդային շահերը, որ կը համախմբէր հալէպահայ երիտասարդներն ու միութենականները, հոգեւոր պետերն ու ժողովուրդը՝ միասնաբար բողոքի մեր ձայնը, մեր պահանջը բարձրացնելու, ոգեկոչելու նահատակներուն յիշատակը, նաեւ Սուրիոյ ժողովուրդին ծանօթացնելու մեր պայքարին էությունը:

Իբրեւ Սփիւռքի գաւակ, յաճախ Հալէպի թաղերէն անցնելով զգացած ու ապրած եմ Երեւանի շահերթի իմ քոյրերուն եւ եղբայրներուն քայլերը, մաղթած եմ որ մեր աշխատանքը միանայ ու պտղաւորուի անպայման՝ մեր նոր մտածելակերպով, հայրենասիրութեամբ ու գիրար նեցուկ կանգնելու պատրաստակամութեամբ:

Մեր բոլորին մտապատկերին մէջ լոյս մը կայ, որ կը լուսաւորէ մեր երազները ու մեզ միացնելու ուղիներ ցոյց կու տայ յաճախ:

Այս տարի Ապրիլ ամսուան ընթացքին Հայաստան հաստատուած էի արդէն: Հաւանաբար հայրենի մեր քոյրերուն եւ եղբայրներուն համար շահերթը սովորական արարողութեան մը վերածուած էր այլեւս, սակայն ինծի համար հայրենիքիս մէջ շահերթի մասնակցիլը վերապրելու կամքի ամրացումն էր, որը էությունս ցնցող մարտահրաւեր մը:

«Դարձի՛ր Ձահակիր»... Այս տարի ես ալ առիթը ունեցայ դառնալու Ձահակիր: Ձահակիր մը, որուն հետ մեծցած է Արեւմտահայաստանէն Սուրիա հասած իր պապերուն վրէժի զգացումը եւ արդարությունը վերականգնելու կանչը:

Այս անգամ ալ ջահս բարձրացուցած Երեւանի մէջ քալեցի ու հասայ Ծիծեռնակաբերդ:

«Մէկ Հայրենիք, մէկ դատ, մէկ ճանապարհ՝ պայքար»:

այս գրությունը կրող պաստառներ բարձրացուցած կը քալեիք դէպի Ծիծեռնակաբերդ:

Յուզիչ էր, միաժամանակ ոգեւորիչ տեսնել այսքան երիտասարդութիւն իր ազգին իրաւունքներուն համար պայքարելու պատրաստակամութեամբ: Ջահերթը կ'առաջ-

նորդէր ՀՄԸՄ-ի փողերախումբը: Հայոց Յեղասպանութիւնը ընդունող երկիրներու դրօշները մէկ առ մէկ կը ծածանէին մեր դիմաց: Բազմահազար ժողովուրդը կանթեղներով «Պայքար... պայքար» կոչելով անելի քան չորս ժամ կը քալէր՝ ազգային երգերով եւ պատգամներով լիցքաւորուելով:

Հայրենի հողին ուժը զգացի, կլիման բնաւ չխանգարեց մեր քայլերը, անձրեւը չխամբեցուց մեր շահերը: Գրիչս կը մնայ անզօր նկարագրելու այդ ժամերու հպարտութեան զգացումներս: Գիտակից երիտասարդ սերունդներ ամբողջ թելթելի տուած կը քալէին:

Մերթ ընդ մերթ մտքով կը թըռչէի Հալէպ, ուր եւս շահերթ տեղի կ'ունենար: Կողքս տեսայ Հալէպի իմ ընկերներէն շատեր՝ Այգը, Մակտալեան, Շանթը, Էլեւան, Արփին եւ...: Բոլորն ալ ինծի նման եկած հասած էին հայրենիք: Մեր փոքր երազը իրականացած էր, հաստատուած էինք հայրենիք, սակայն մեր պայքարուն կանչը մեզ կը մղէր մեծ երազի իրականացման համար պայքարի:


Սուրիական դրօշը տեսնելով բոլորս պահ մը իրար նայեցանք: Այո՛, Սուրիոյ մէջ, Հալէպի մէջ հասակ առինք հայրենասիրութեան ոգիով, մեր ազգային արժէքներուն տեր կանգնելու գիտակցութեամբ: Հալէպը շատ բան տուաւ մեզի, պարտական եւք անոր:

Վառեցինք շահերը յանուն մեր սրբադասուած նահատակներուն, յանուն մեր պայծառ ապագային եւ ի հեճուկս մեր գոյութեան սպառնացող թշնամիին:



## ՊԱՏՏՈՆԵԿԱՆ ԱՆՆԿԻՆ

### ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԾ ՀԱԼԷՊ



Լիսի Նալպանտեան

Ճիշդ է, որ հայրենիքս Հայաստանն է, սակայն ծննդավայրս՝ Հալէպ: Կեանքիս առաջին չորս տարիները ապրեցայ հանգիստ եւ ուրախ, սակայն դժբախտաբար պատերազմի պատճառով երջանկութեամբ լեցուն օրերը վերածուեցան տազնապալի օրերու: Չրկուեցանք ջուրէ, ելեկտրականութենէ ու չկրցանք վայելել մեր մանկութիւնը ինչպէս որ պետք է:



Եթէ տարիներ ամբողջ անցուցինք վախով ու սարսափով, սակայն երբեք չյուսահատեցանք: Համբերեցինք, պայքարեցանք ու վերջապէ՛ս դարձանք յարթական:

Մեծ ջանքերով վերանորոգուեցան եկեղեցիներն ու դպրոցները: Հապարտ եմ Հալէպի մէջ գոյատեւելուս համար: Պիտի ուսանիմ ու ծառայեմ ակումբիս, ազգիս ու հայրենիքիս՝ յառաջ տանելու համար մեր հաւաքական կեանքը:

Ճիշդ է, որ այս բոլորէն ետք հանդիպեցանք աղետալի երկրաշարժին ու օրերով մնացինք մեր տուններէն դուրս, սակայն այս անգամ ալ յուսահատութիւնը չկլանեց մեզ: Կրկին ոտքի կանգնեցանք:

Հալէպի բերդին նման կանգուն պիտի մնանք ու պայքարինք բոլոր դժուարութիւններուն դէմ: Կեանքը պայքար է, մերթ խաղաղ, մերթ փոթորկալի:

**«ԳԱՆՉԱՍԱՐ»**  
ՊԱՏՏՈՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՍ

Խմբագիր՝ Չարմիկ Զիլմբօշեան-Պողիկեան  
Սրբագրիչներ՝ Նուշիկ Սողոյեան-Առաքելեան  
Վեհան Պարսումեան

Ձեւաւորող՝ Յովսէփ Զալօղլեան  
Գրաշար՝ Անի Թոփալեան-Սարուխան  
Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարեն Պապեան-Աղայեկեան  
Կայքէջի պատասխանատու՝ Աւօ Պողոսեան  
Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիլմբօշեան  
Հաշուապահ՝ Յովիկ Պարսումեան 0957 953 811

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը Երկուշաբթի օրերը:
- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:
- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:
- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:
- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»-ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով, կապ հաստատելով թերթիս հաշուապահին հետ:




## ԾԻՊԻՆՅԻ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻՆ (Մահուան 850-Ամեակին Առիթով)



Կիրակոս Գոյումեան (Ծիպինցի)

Բանաստեղծ, երաժիշտ, աստուածաբան, Ամենայն հայոց կաթողիկոս Ներսես Շնորհալի (Ներսես Դ. Կլայեցի) միջնադարեան Հայաստանի կիլիկեան հոգեւոր-մշակութային դպրոցի ամենափայլուն ներկայացուցիչներէն է:

Ան տարիներ շարունակ ստեղծագործեց, շրջեցաւ աշխարհէ աշխարհ՝ ըլլալու կուռքը իրմէ վերջ եկող սերունդներուն:



Ազգերը կ'ապրին նաեւ ոգեղէն, մշակութային արժէքներով: Առանց այդ արժէքներուն մարդիկ ոչինչ կրնան իրագործել: Մարդոց մեծութիւնը կը չափուի մտաւորայդաբարձրին բացուելու եւ անկէ կարելի օժանդակութիւնը առնելու համեմատութեամբ:

Շնորհալի ամենամեծ շարականագիրն է: Ան հեղինակած է հարիւրաւոր օրհներգներ, որոնք հարստացուցած են Հայ եկեղեցւոյ պատարագներու եւ ժամերգութիւններու երգասացութիւնները, խորացուցած է հոգեւոր երգերու ազգային բովանդակութիւնն ու հայրենասիրական ոգին, կատարելագործած եղանակները, բարեկարգած եւ ճոխացուցած եկեղեցական երգերը: Շնորհալի ամենասիրուած ու տարածուած հոգեւոր երգերէն է «Առաւօտ լուսոյ»-ն, որուն եռատող տուները կը սկսին հայոց Այբուբենի յաջորդական տառերով:

**Առաւօտ լուսոյ,  
Արեգակն արդար,  
Առ իս լոյս ծագեա՛:**

**Բղխո՛ւմն ի հօրէ,  
Բղխեա՛ ի հոգւոյս  
Բան քեզ ի հաճոյս...**

Այս բոլորը կը գրեմ այն մեծ սիրով, որմով սորված ու երգած, ունկընդրած եմ Ներսես Շնորհալի շարականները:

Այս տարի Վատիկանի մէջ տեղի պիտի ունենան յատուկ ձեռնարկներ՝ Ս. Ներսես Շնորհալի մահուան 850-ամեակին առիթով:

Կազմակերպիչ յանձնախումբին մաս կը կազմեն Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Հայ Կաթողիկէ Պատրիարքութեան եւ Վատիկանի ներկայացուցիչները:

Այստեղ կ'ուզեմ յիշել, որ ծիպինցիներու համար Ներսես անունը յատուկ նշանակութիւն ունեցած է: Բացատրեմ, թէ ինչո՛ւ...

Երկրին մէջ՝ այսինքն ճիպին գիւղին մէջ, գիւղ՝ որ հեռու չէր Հռոմկալայէն, ուր մեծագործած էր Ներսես Շնորհալի, ու այդ իսկ պատճառաւ ճիպինի մէջ ապրող իւրաքանչիւր հայ ընտանիք՝ անպայման Ներսես անունով մանչ մը կ'ունենար, որ մեծնալով շնորհալի դառնար:

Սրտի մեծ գոհունակութեամբ պէտք է արձանագրեմ, որ մեր մեծ ընտանիքին (գերդաստանին) մէջ ողորմած հայրս, անդրանիկ գաւալս եւ երկու եղբորդիներս, այսինքն՝ 4 անդամներ, կը կրեն Ներսես անունը:

Ներսես անունը մեզի համար սիրելի անուն մըն է իր օգտագործման բոլոր ձեւերով՝ Ներսես, Ներսո, Նեսո, Նենես եւ այլն, որոնք հպարտանքով կը գործածենք:

Ծիպինցիները (հռոմկալացիները) եղած են եկեղեցաւեր քրիստոնէսներ եւ աչքի ընկած են եկեղեցւոյ ծառայելու իրենց ձգտումով, որպէս դպիր թէ քահանայ:

Անոնք միշտ սորված եւ տաղանդով երգած են Ներսես Շնորհալի շարականները, աղօթքներն ու տաղերը:

Ես ալ, իմ կարգին, Ներսես Շնորհալի տաղանդին ու շնորհքներուն մեծ համարում ունենալով մտայնացած էի հիմնել իր անունով մրցանակ մը ու զայն կոչել Ներսես Շնորհալի ուսանողական մրցանակ: Նիւթական այս մրցանակը կը շնորհուի Քուէյթի եւ Հալէպի պետական պաքալորիայի քննութիւններուն բարձրագոյն նիշեր ապահովող շնորհալի աշակերտներուն:

Նպատակը անոնց մէջ մրցակցութեան ոգին բարձր պահելն է: Այս մրցանակը աշակերտներուն մոլիչ ազդակ հանդիսացաւ եւ իրապէս ալ անոնց տարեվերջի քննութիւններուն արդիւնքը զգալիօրէն բարձրացաւ: Երեւոյթ մը, որ կը քաջալերէ ուսանողներու մրցակցութեան ոգին, իսկ նուիրատուին համար հոգեկան բերկրանք մը կը հանդիսանայ:

Սոյն մրցանակին բաշխումը դարձած է Հալէպի եւ Քուէյթի հայ համայնքի տարեվերջի մնայուն արարողութիւններէն մէկը:

Կը մաղթենք, որ ան յարատեւ երկար տարիներ՝ հայ ուսեալ տարրը առաջ մղելու՝ յանուն ազգին ու եկեղեցւոյ:

Համեստաբար, սակայն հպարտութեամբ կը յիշեմ նաեւ պարգևատրումս Ս. Ներսես Շնորհալի պատուոյ շքանշանով, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. -ի ձեռնամբ, 2009-ին:

Եկեղեցական արարողութիւններու ընթացքին երկուդածութեամբ կ'ունկնդրեմ Ներսես Շնորհալի «Քրիստոս Ի Մէջ Մեր Յայտնեցաւ» պատարագային երգասացութիւնը, որ կը հնչէ Հաւատացելոց Պատարագի ընթացքին, ուղեկցելով խաղաղութեան ողջոյնի ծիսական պահուն: Իսկ Կոմիտասի մշակումով Ներսես Շնորհալի «Տեր Ողորմեա» աղօթքը գլուխ գործոց մըն է, որ դարեր շարունակ հնչած է ու կը հնչէ պատարագի արարողութեան կարեւորագոյն պահուն, հաղորդութենէն առաջ, երբ խորանի վարագոյրները կը փակուին: Կոմիտասի մշակած տարբերակի բնօրինակին բանաստեղծական բառերուն հեղինակը Սիմեոն Ա. Երեւանցի կաթողիկոսն է, իսկ մեղեդին առնուած է հանճարեղ երաժիշտ Ներսես Շնորհալի «Որ Զխորհուրդ Քո Գալստեան» շարականէն:

Շնորհալի մեղեդիները այնքան ազդեցիկ են ու տպաւորիչ, որ խոր ազդեցութիւն կը թողուն նոյնիսկ ոչ հայ ունկնդիրին վրայ ու կ'անջատեն զինք նիւթական աշխարհէն՝ ազնուացնելով անոր հոգին:

Ներսես Շնորհալի «Առաւօտ Լուսոյ»-ն է «Նորահրաշ Պսակաւոր»-ը նուիրուած Աւարայրի հերոսներուն, մեզի ընկերակցած են մեր մանկութեան օրերէն ու հայկականութեամբ դրոշմած են մեր հոգիները: Անոնք իրենց խորհրդաւորութեամբ նոյնքան կ'ազդեն օտար ունկնդիրին վրայ:

Ունկնդրեցէ՛ք Յովհաննէս Թումանեանի «Անոյշ» օփերայի «Ամպի Տակից Ձուր Ե Գալիս» երգը, ապա Շնորհալի «Առաւօտ Լուսոյ» հոգեւոր երգը ու պիտի տեսնեք թէ որքան նմանութիւն կայ անոնց մեր վրայ ձգած ազդեցութեան մէջ, որովհետեւ երկուքն ալ կը բխին մեր ազգային ակունքներէն ու կը յղկեն մեր հոգին, զանազանուելով հանդերձ իրենց բնոյթին մէջ:

Ընկէջ

### Ի՞նչ ՉԵՆՔ...

Սկիզբ՝ էջ 5

Ֆրանսացի բանաստեղծ Վիքթոր Հիւկո ըսած էր, «ԿԱՐՄԻՐ ԳԸԼԻՆԱՐԿ ԴՐԻ ՀԻՆ ԲԱՌԱՐԱՆԻՆ»: Այսօր հայը կը գտնուի իր հայրենիքի վերջին բեկորին վրայ թէ դարձած ըլլայ գոյութիւն չունեցող համաշխարհային ազգի անդամ, ինքնազիտակցական հրաշք պահու մը, առանց անազախրած մնալու, իր լինելութեան ընթացքի առաջնորդութեան վրայ պէտք է որոշէ, հետեւութեամբ Վիքթոր Հիւկոյի, ԿԱՐՄԻՐ ԳԸԼԻՆԱՐԿ ԴՆԵԼ...

Կ'ունենանք ԻՐԱՒՈՒԹԵԱՄԲ ԱՌԱՋՆՈՐԴՈՐ ԵՒ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴՈՒՄ ԴԵԿԱՎԱՐՈՒԹԻՒՆ, որ երկինքէն պիտի չգայ: Կամ անհարազատ ուժեր, մեր մեղսակցութեամբ կամ ապիկարութեան պատճառով պիտի առաջնորդեն մեզ իրենց ուզած ճամբաներով, կամ հովի եւ փոթորիկի դէմ մենք տեր պիտի ըլլանք մեր ներկային եւ ապագային եւ նուաճենք մեր իրա՛ւ ինքնութիւնը,

չբաւարարուելով կիսամիջոցներով, լռեցնելով թաղային հեղինակութիւններու աճաբարութիւն-հանդէսները:

Միշտ խորհելով, որ «վաղը միշտ ուշ է»...

Այս ըմբռնումով պէտք է խորհիլ եւ գործել, հետեւելով Ամերիկայի մեծ նախագահ Աբրահամ Լինքոլնի կենսափորձէ բխած խօսքին, որ «յանձնառութիւնը խոստումները կը դարձնէ իրականութիւն»:

Այսօր, ազգին համար, եթէ կ'ուզենք տոկալ եւ տնել, իւրաքանչիւր հայու համար անհրաժեշտ է Լինքոլնի նշած խոստումները իրականութիւն դարձնելու կոչուած յանձնառութիւնը:

Ազգային գիտակցութիւն, ծառայութիւն, հաւատարմութիւն պէտք չէ վերծանել անմիտի խօսքի, ազատութիւն-չարաշահումով եւ ինքնազոհական թատրոն սարքել համացանցի ընծայած անդարպաս բեմին վրայ դատարկ ու ծակ տակառներ փայտիկներով թմբկահարել, ըսուածի եւ գրուածի արձագանգելով կամաւոր խլացած-չբաւարարուածի (չ)իմացումով:

**Media Caramel** ընկերութիւնը կարիքը ունի  
**UX/UI-ի մասնագէտներու:**  
 Հետաքրքրուողները կրնան հեռաձայնել հետեւեալ թիւին՝  
**0937 380 332:**  
 Get in touch to learn more

## ԻՆՉ Կ'ԸՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



### Խոյ

Ձեր ամենօրեայ հոգերը մեկդի նետեցէ՛ք եւ Նոր գործի առաջարկը ընդունեցէ՛ք: Օրինաբեր օրեր պիտի դիմաւորեք:



### Ցուլ

Ժրաջան աշխատանքի մը արդիւնքը պիտի ստանաք վերջապէս: Բարեկամներու հետ հաճելի պահեր պիտի ունենաք եւ հոգեպէս կազդուրուիք:



### Երկուորեակ

Նախանձոտ մարդոցմէ հեռացէ՛ք: Ձեր գաղտնիքները մի՛ բացայայտեք ուրիշներուն: Առողջութեան ալ հոգ տարէ՛ք:



### Խեցգետին

Ձեր ընկերները պիտի խրախուսեն ձեզ: Ձեր տեսակէտը համարձակութեամբ պաշտպանեցէ՛ք: Ընթրիքի սեղանի մը շուրջ պիտի գտնուիք բարեկամներու հետ եւ զուարճանաք:



### Առիծ

Ձեր բոլոր գործերը յաջողութեամբ իրենց աւարտին պիտի հասնին եւ դուք գնահատանքի արժանանաք: Մտերիմ բարեկամներէ անսպասելի նուէրներ պիտի ստանաք:



### Կոյս

Ձեր զգացումները խոստովանեցէ՛ք ձեր սիրելիին: Արդիւնաւետ ձեռքբերումներ պիտի ունենաք եւ ընկերներու հետ ձեր յարաբերութիւնները պիտի բարելաւուին:



### Կշիռք

Ապագայի ձեր ծրագիրները պիտի յաջողին՝ բարեկամներու աջակցութեամբ: Մարդիկ, որոնք նախապէս թերագնահատած էին ձեզի, իրենց կարծիքը պիտի փոխեն: Ինքնագարգացման զարկ տուէ՛ք:



### Կարիճ

Լաւ է, որ յոյս դնեք ձեր սեփական ուժերուն վրայ: Իրար մի՛ անցնիք եւ խոչընդոտները յաղթահարելու համար վըստահութեամբ յառաջացէ՛ք եւ պիտի յաջողիք:



### Աղեղնաւոր

Բոլոր մարդոց հետ ալ դիրութեամբ կրնաք լեզու գտնել՝ ձեր ճկուն նկարագրին շնորհիւ: Կարելոր գործեր սկսելու համար հիանալի շաբաթ է:



### Այծեղջիւր

Արագ որոշումներ կայացուցէ՛ք որոշ հարցերու մասին: Ձեզ անհանգստացնող անսպասելի պատահարներ պիտի դիմագրաւեք եւ ձեր շահերուն համար օգտագործեք զանոնք:




### Ջրհոս

Նախկին գործընկերներու հետ վեճեր պիտի ծագին: Նիւթական դժուարութիւններ պիտի յաղթահարեք՝ ձեր աննկուն կամքին եւ յարատեւ աշխատանքին շնորհիւ:



### Ձուկ

Ծուլութենէ խուսափեցէ՛ք, որպէսզի յաջողութիւններ նուաճեք: Ձեր սիրելիներուն հոգ տարէ՛ք եւ անոնց հետ միասնաբար զուարճացէ՛ք: Հաճելի շաբաթ է:



Սոնա Տէր Պողոսեան-Տարաքճեան

## ԻՆՉՊԷ՛Ս ԿՐՆԱՆՔ ՎԵՐԱԿԱՆՁՆԵԼ ՄԵՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Համացանցը, իր բոլոր առաւելութիւններով մեկտեղ, երբեմն կը յառաջացնէ կախեալ ըլլալու բացասական ընթացք մը, որ հետեւողին անհատական գարգացման նպաստելու փոխարէն կը ցրուէ իր հետաքրքրութիւնները անկարելիոր սիւթերով կամ պարզապէս ծանուցումներու տարափով:



Երբեմն ընկերովի կը խօսինք ինքնագարգացման մտային եւ մշակութային հարստացման մասին ու կ'եզրակացնենք, որ գիրք ընթերցելու, լաւ երաժշտութիւն ունկընդիլու, թանգարան կամ այլ արուեստի կեդրոններ այցելելու մարդոց հետաքրքրութիւնները այնքան նուազած են, որ անոնք ամբողջովին կլանուած են համացանցով: Աւելին. համացանցի մէջ կը փորձեն գտնել իրենց բոլոր հետաքրքրութիւնները, երբեմն ալ իրենց հետաքրքրութիւններուն որակը նուազեցնելով ու անորակ, օգուտ չբերող տեղեկութիւններու ճահիճին մէջ յայտնուելով:

Ուստի համացանցի հետեւիլը մոլութեան չվերածելու ու մեր ինքնագարգացման ալ ժամանակ տրամադրելու համար կ'առաջարկենք.

1- Բջիջային հեռաձայնէն ջնջեցէ՛ք Twitter եւ Facebook յաւելումները եւ զանոնք օգտագործեցէ՛ք միայն համակարգչային տարբերակով:

2- Ժամը գիշերուան 22:00-ին անջատեցէ՛ք բջիջային հեռաձայնները, համակարգիչները եւ բոլոր էլեկտրոնային սարքերը: Ասիկա շատ կարելոր է, քանի որ մեր արժեքաւոր ժամանակը կը խնայէ քնանալէ առաջ եւ կը մղէ գիրք կարդալու, լաւ երաժշտութիւն մը ունկընդիլու, հաճելի գրոյց մը ընելու տնեցիներուն հետ եւ այլն:




3-Կ'առաջարկենք սահմանել օր մը, երբ բջիջային հեռաձայնով ընդհանրապէս համացանցէն չօգտուիք, այլ բաւարարուիք համակարգիչով՝ կարելոր գործերու համար միայն:

Երբ կիրառեք նախորդ կետերուն մեծ մասը կը նկատեք, որ ունիք ավելորդ ժամեր, զորս նախապէս չէիք ունենար: Ուրեմն օգտագործեցէ՛ք այս ժամերը ձեր մտային եւ հոգեւոր գարգացման համար:

Այս առումով կ'առաջարկենք երկու բան.

Առաջին՝ եթէ օրական ընթերցեք ընդամենը քառորդ ժամ (իկն որ համարժէք է 10 էջի), ամենայն հաւանականութեամբ մեկ ամսուան ընթացքին կը կարդաք մեկ գիրք: Եթէ կրցաք կէս ժամ տրամադրել ընթերցումի՝ ամիսը երկու գիրք կը կարդաք: Աստիճանաբար պիտի նկատեք, որ ընթերցումը դարձաւ սովորութիւն:



Երկրորդ՝ գարգացնող տեսանիւթեր դիտել: Եթէ անպայման համացանցէն պիտի օգտուիք, օգտուեցէ՛ք գիտելիքներով հարուստ կայքերէ, ձեր նախասիրած սիւթերուն առընչուող YouTube-ի գրոյցներէ, դասախօսութիւններէ, համերգներէ եւ այլն:

Եթէ մէկ ամիս կատարեք այս յօդուածով առաջարկուած խորհուրդները, պիտի նկատեք անոնց օգտակարութիւնը եւ անդրադառնաք, թէ որքան անտեսած էիք ձեր ինքնագարգացման նպաստող զբաղումները:



Ռաֆֆի Սիկանյան

### ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՆ

- Սուրիոյ պասքեթի աղջկանց Բ. դասակարգի փխոյեանութեան մըրցումներու արարտին, ԶՄԸՄ-ի պասքեթի աղջկանց խումբը կրկին վերահարձաւ Ա. դասակարգ, Մահարտէի մէջ պարտութեան մատնելով հիւրընկալ կազմը՝ 61 - 55 արդիւնքով: Մրցումին, աղջիկներու մօտեցումը եղաւ միայն մէկ ուղղութեամբ, որն էր յաղթական արարտել խաղը, ապահովելու համար Ա. դասակարգի մէջ իրենց տեղը: Անոնք լրջօրէն հետեւեցան կազմի գըլխաւոր մարզիչ Մանօ Մարգարեանի բժախնդիր աշխատանքին: ԶՄԸՄ-ին Ա. Դասակարգ պիտի ընկերակցի Լաթաքիոյ Զըթթիլը:



- Սուրիոյ պասքեթի Ա. դասակարգի փխոյեանութեան մըրցումներու քառորդ արարտական առաջին խմբակէն հասան Ռահտէն, Պարատան, Սաուրան եւ Սահէլը, իսկ երկրորդ խմբակէն՝ Զալէպի Ահլին, Ճալաաը եւ Լաթաքիոյ Թըշրիլը:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

### ՌԵԱԼ ՄԱՏՐԻՏ ՍՊԱՆԻՈՅ ԲԱԺԱԿԻՆ ԱՐԺԱՆԱՅԱՐ

Ինը տարի ընդմիջումէ ետք, Սպանիոյ մայրաքաղաքի Ռեալ Մատրիտը յաջողեցաւ կրկին ձեռք ձգել, 20-րդ անգամ ըլլալով Լուաճել, Սպանիոյ գաւաթը: Սեփիլիոյ մէջ տեղի ունեցած եզրափակիչ հանդիպումին, իտալացի Գարլօ Անչելոթիի գլխաւորած կազմին մըրցակիցը դարձաւ Օսասունան եւ կըրցաւ խաղը յաղթական արարտել 2 - 1 արդիւնքով: Արդէն երկրորդ վայրկեանին խաղի հաշիւը բացաւ Ռեալի պրագիլցի յարձակող Ռոտրիկօն, որուն կողային փոխանցում կատարեց պրագիլցի մարզիկ Վինիսիոս Ժուսիքըրը: 58-րդ վայրկեանին Օսասունան վերականգնելով իր ուժը կըրցաւ նշանակել հաւասարութեան կողմ՝ կիսապաշտպան Լուքաս Տոռոյի միջոցաւ: Ռեալի յաղթական կողմը 70 վայրկեանին դարձեալ նշանակեց Ռոտրիկօն:



Օսասունան եւ կըրցաւ խաղը յաղթական արարտել 2 - 1 արդիւնքով: Արդէն երկրորդ վայրկեանին խաղի հաշիւը բացաւ Ռեալի պրագիլցի յարձակող Ռոտրիկօն, որուն կողային փոխանցում կատարեց պրագիլցի մարզիկ Վինիսիոս Ժուսիքըրը: 58-րդ վայրկեանին Օսասունան վերականգնելով իր ուժը կըրցաւ նշանակել հաւասարութեան կողմ՝ կիսապաշտպան Լուքաս Տոռոյի միջոցաւ: Ռեալի յաղթական կողմը 70 վայրկեանին դարձեալ նշանակեց Ռոտրիկօն:

### ՊԵՆՁԵՄԱՆ ՌԵԱԼԻՆ ԶԵՏ 25-ՐԴ ՏԻՏՆՈՒՄԸ ՆՈՒԱԾԵՅ

Ֆրանսացի յարձակող Զարիմ Պենզեման 25-րդ տիտղոսը նուաճեց Ռեալ Մատրիտի Սպանիոյ գաւաթի խաղարկութեան եզրափակիչին Օսասունայի նկատմամբ յաղթանակին շնորհիւ: 2011 թուականէն արքայական ակումբին հետ հանդես եկող Պենզեման դարձաւ Սպանիոյ քառակի փխոյեան, կրկնակի գաւաթակիր, հնգակի բացառիկ գաւաթակիր, Չեմպիօնըզ լիկի հնգակի գաւաթակիր, Եւրոպայի հնգակի բացառիկ գաւաթակիր, աշխարհի ակումբային առաջնութեան քառակի փխոյեան: Պենզեման Ռեալի տիտղոսներու քանակով հաւասարեցաւ խումբի նախկին խաղացող, պրագիլցի պաշտպան Մարսելոյին, որ Ռեալի հետ հանդես եկած է 2007-2022 թուականներուն:



### ԽԱԶԲԱՌ (ՄԻ 437)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

### ՉՐԻՂՈՆԱԿԱՆ

- 1- Ձիւարին ոտքերը դնելու մետաղէ կազմած: Մանր քար:
- 2- Զակառակ՝ անձնական դերանուն: Զակառակ՝ խուզուած ու մաքրուած ոչխարի բուրդ:
- 3- Վրիժառու բազուկ, որ 17 Ապրիլ 1922-ին Արշալիր Ծիրակեանի հետ Պերլինի մէջ ահաբեկեց երիտթուրք գործիչներ Պեհաետտին Շաքիրն ու Ճեմալ Ազմին:
- 4- Զակառակ՝ թոյլտուութիւն: Միայն:
- 5- Բայական լծորդութիւն:
- 6- Զակառակ՝ աղէկ: Ձայնանիշ մը: Զակառակ՝ աղբիւր:
- 7- Եական բայ: Ձայնանիշ մը: Զակառակ՝ աչք:
- 8- Վիքթորիա լիճէն սկիզբ առած գետ: Մտիկ ընէլ:
- 9- Զակառակ՝ տառի մը հարեանները: Լեցուն:
- 10- «Մուխը մարտ Մանուկ» կոչումը ստացած ԶՄԸՄ-ի Զալէպի ներկայացուցչական խումբի ձախ յետսապահին մականունը:
- 11- Զաստատական պատասխան: Զակառակ՝ աղբիւր: Մեղուներու խումբ:
- 12- 5500: Զակառակ՝ Սիամանթոյի ծննդավայրը: Մեծ ձուկ:

### ՈՒՂԿԱԿԵԱԳ

- 1- Անապատան: Շարունակ:
- 2- Լեռ: ԶՄԸՄ-ական քոյրերու միաւոր:
- 3- Անձնական դերանուն: Զակառակ՝ հարցական դերանուն:
- 4- Տաք երկիրներու պտուղը: Զայաստանի մէջ բարձրագոյն կրթութեան հաստատութիւններուն տրուած անունում:
- 5- Մուր: Սրատես:
- 6- Պահուըտիլ: Զակառակ՝ գոյութիւն ունին:
- 7- Զակառակ՝ 5060: Եւս:
- 8- Գուշակել: Յաճախ:
- 9- Զակառակ՝ ժամանում: Որոշուած գին:
- 10- Անցք մը խիստ գոցել: Մշուշ: Որսի կենդանի:
- 11- Ձայնաւոր տառեր: Տախտակի շերտ:
- 12- Մագիլ: Սպանախ:

### ԽԱԶԲԱՌ (ՄԻ 436)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	h	u	u	u	u	u	u	u	u	u	u	u
2	u	n	p	u	p	u	p	u	u	u	u	u
3	n	u	u	u	u	u	u	u	u	u	u	u
4	u	u	u	u	u	u	u	u	u	u	u	u
5	u	u	u	u	u	u	u	u	u	u	u	u
6	u	u	u	u	u	u	u	u	u	u	u	u
7	u	u	u	u	u	u	u	u	u	u	u	u
8	n	u	u	u	u	u	u	u	u	u	u	u
9	u	u	u	u	u	u	u	u	u	u	u	u
10	u	u	u	u	u	u	u	u	u	u	u	u
11	u	u	u	u	u	u	u	u	u	u	u	u
12	p	u	u	u	u	u	u	u	u	u	u	u

ԼՈՒՐԵՐ

Երևուեցւոր

15/5



15° 30°

Երեքեցւոր

16/5



17° 33°

Չորեքեցւոր

17/5



21° 36°

Հինգեցւոր

18/5



19° 34°

Ուրբաթ

19/5



17° 35°

Շաբաթ

20/5



19° 35°

Կիրակի

21/5



18° 36°

## «ՇՈՂ»-Ի ՊԻՆԱԶԱՐԴ ԵՆՈՅԹԸ

Պարը կախարդական աշխարհի մըն է, ուր միաձուլուած կը ճախրին մարդու հոգին եւ մարմինը: Պարը միայն մարմինի շարժումը չէ: Անոր մէջ ամփոփուած է արուեստի ամբողջ բազմութիւնը՝ երաժշտութիւն, նկարչութիւն, բանաստեղծութիւն: Իւրաքանչիւր պար կը խօսի իր մարմինով եւ հոգիով: Ան մտքի եւ սրտի ստեղծած քաղաքակրթութիւնն է:

Մայիս ամսուան սկիզբը, գարնան վերջին օրերուն՝ Շաբաթ 6 եւ Կիրակի 7 Մայիսին, Կրթասիրաց Մշակութային Միութեան Գործադիր Մարմինին կազմակերպած «Շոլ» պարախումբը իր տարեկան ելոյթը հրամցուց մեզի, «2. Գարբիէ-եան» սրահէն ներս:

Ներկայ էին Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդի ներկայացուցիչ Հայր Մանուկ Վրդ. Պարիխանեան, Բերիոյ Կաթողիկէ Հայոց Առաջնոր-

*թիթիզ թիւ մէկ սիրունիկ...»:*

Պարողները լաւ մարզուած էին: Անոնք, ապրելով երաժշտութեան կշռոյթը, խօսուն եւ արտայայտիչ պատկերներ կը գծէին, իսկ հմայիչ տարազները կ'ամբողջացնէին պատկերը:

Պարողներուն մէջ եգերուն թիւը գերակշռող էր, ինչ որ արտացոլում էր երկրի ներկայ վիճակին:

Հակառակ տղոց սակաւաթիւ ըլլալուն, պարերուն եւ պարողներուն ներդաշնակութիւնը զգալի էր: Հանդիսատեսը քար լռութեամբ կը հետեւէր:

Աղքատ էին միայն ծափողոյնները, այդ ալ հալէպահայ հանդիսատեսին գնահատելու անհամարձակ ոճին հետեւանքն է, կը խորհիմ: Մինչդէռ ծափողոյններու տարափոք որքա՞ն կը խրախուսէ ամփոփել շարունակ պար սորվող ու հրճուանքով բեմ բարձրացող պատանիներն



դի ներկայացուցիչ Արժ. Տէր Կոմիտաս Զինյ. Տատաղեան, Հայ Աւետարանական Համայնքի Պետ Վերապատուելի Դոկտ. Յարութիւն Սելիմեան, ՀՀ Հալէպի Գլխաւոր Հիւպատոսութեան Խորհրդական Դաւիթ Թադեոսեան, ՀՀ Մարդասիրական Խումբի Հիւպատոսութեան ներկայացուցիչ գևր. Արկատի Տոնյեան, հալէպահայ միութիւններու ներկայացուցիչներ եւ պարարուեստը քաջալերողներ:

Յայտագիրը կ'ընդգրկէր երկու արար, իւրաքանչիւր արար եօթը պարով կ'ամբողջանար: Պարախումբի պարուսոյցներն էին՝ Լեւա Չոքկարեան, Բերլա Մրժանէ եւ Ժօլ Ղազգի:

Ելոյթը սկսաւ Ալլատինի պարով, որուն ընթացքին ներկաները վերիջեցին «հազարումէկ գիշերներ» արաբական հեքիաթը:

Հանդիսավարուհի Անի Աթաշեան մերթ ընդ մերթ մէջբերումներ ընելով քերթուածներով հարստացուց յայտագիրը եւ շնորհակալութեան խօսք ուղղեց տարազները ձեւաւորող, իրագործող եւ բեմը յարդարող տիկիններուն:

Ապա ներկայացնելով «Մէկ-երկու» պարը, ան ընթերցեց երգին բառերը, որպէսզի ներկաները հաղորդակից դառնան պարի նիւթին.

*«Համրել եւ հաշուել սորվիմ,  
մատիկներս բացած եմ,  
մէկէն ուրջ կը գրեմ,  
փայտի վրայ մէկ քթիկ,*

ու երիտասարդները:

Քաջալերեցէ՛ք պարողները, երգողները, երկրի այս պայմաններուն մէջ մշակոյթին հաւատացողները, սիրելիներ:

Ելոյթը շարունակուեցաւ ու հանդիսավարուհին տպաւորիչ առոգանութեամբ ասումնքեց Յովհաննէ Շիրազի «Հայաստանի Աղջիկները»:

*«Մէկը՝ մէկից պարզ ու կախարհ,*

*Մէկը մէկից խօսքով քաղցր,  
Մէկը՝ աստղիկ, մէկը լուսնակ,  
մէկն՝ արեւի տեսքով քաղցր,  
Իմ Հայաստանն են գարդարումսուրբ աղջիկներն Հայաստանի...»:*

Ապա խումբ մը պատանիներ ներկայացուցին «Շունկոյ Շնորհաւոր» պարը:

Հանդիսավարը այս անգամ բեմ ներկայանալով շնորհակալութիւն յայտնեց տարազներու եւ քուլիսի պատասխանատուներուն, պարուսոյցներուն, որոնք եռանդով եւ կորովով հետեւեցան խումբի մարզումին: Ինչպէս նաեւ շնորհակալութիւն յայտնեց յայտագիրի, ծայնայինի եւ լուսաւորումի բոլոր պատասխանատուներուն ու բոլոր անոնք, որոնք ոչ մէկ ճիգ խնայեցին ելոյթին յաջողութեան համար:

Հալէպի մշակութային ձեռնարկները միշտ ալ արժանացած են բոլորին աջակցութեան ու գօրակցութեան: Որքա՞ն քուլիսային աշ-

## ՄԱՅԻՍԵԱՆ ԺԱՄԵՐՊՈԻԹԻՒՆՆԵՐ

Հովանաւորութեամբ՝ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի, Ս. Աստուածածինի Նուիրուած Մայիսեան ժամերգութիւնները ընթացք առին Երկուշաբթի, 1 Մայիս 2023-ին, երեկոյեան ժամը 5.30-ին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, մեծաթիւ ուխտաւորներու ներկայութեամբ:

Ա ս տ ու ա ծ ա մ օ Ր Նուիրուած շարականներով եւ աղօթքներով ժողովուրդը մասնակից դարձաւ հոգեպարար արարողութեան:

Օրուան խորհուրդը ժողովուրդին ուղղեց



Հոգշ. Տ. Մանուկ Վրդ. Պարիխանեան, որ ընդհանուր կէտերու մէջ անդրադարձաւ Աստուածամօր սրբութեան, Նուիրումին, գոհաբերումին, հաւատքին եւ եօթնարբեան շնորհքներով հարստացած կեանքին: Հայր Սուրբը իրաւիքեց բոլոր ներկաները օրինակ առնելու Ս. Կոյս Մարիամի կերպարէն եւ իւրաքանչիւրը

իրեն տրուած աստուածատուր շնորհքով՝ աստուածային առաքիւնութիւնները ապրի եւ արժեւորէ իր կեանքին մէջ:

Աւարտին, ուխտաւորներու գօտիներու օրհնութիւն կատարուեցաւ:

**Թողակից**

խատանք կը տարուի մինչեւ որ խումբ մը բեմ բարձրանայ յայտագիրով մը: Ելոյթը ավարտին հասաւ ավարտական պարով:

Երկրորդ ելոյթի ավարտին իր եզրափակիչ պատգամով հանդէս եկաւ Հայ Աւետարանական Հա-

պատուելին դիտել տուաւ, որ պարը հետեւաբար դաստիարակիչ է նաեւ ու անոր արդիւնքը կը տեսնենք հետագային, մեր առօրեայ համայնքային կեանքին մէջ, երբ պատանիները հասակ նետելով կը դառնան գործունէ ազգայիններ



մայնքի Պետ վերապատուելի Դոկտ. Յարութիւն Սելիմեան: Ան դիտել տուաւ, որ պարախումբին մաս կազմողները միայն պարել չեն սորվիր, այլ՝ հաւաքական աշխատանքին նպաստել ու հաւաքական գործ մը յաջողութեան հասցնելու համար իրենց ներդրումը բերել: Իւրաքանչիւր պարող խումբին մէջ ծուլուելով կը սորվի պահել եւ ցոյց տալ իր իւրայատկութիւնը, որպէսզի մէկը ընդհանուրին եւ ընդհանուրը մէկին նպաստէ ու արդիւնքը ըլլայ հաւաքական աշխատանքի յաջողութիւնը: Վերա-

ու իրենց ներդրումը նոյն սկզբունքով կը բերեն համայնքի կեանքին:

Գնահատելով երկրի ծանր պայմաններուն, երկրաշարժի հետեւանքներուն ստեղծած դժուար օրերուն մէջ նման ելոյթի մը կազմակերպումը, վերապատուելին շնորհակալութիւն յայտնեց մեր առօրեան արուեստի հմայքով գարդարելուն համար, ապա յաջողութիւն մաղթեց բոլորին:

Ձեռնարկը իր ավարտին հասաւ Հոգեշնորհ Տէր Մանուկ Վրդ. Պարիխանեանի «Պահպանիչ» աղօթքով: **Սուս Տէր Պողոսեան-Տարաքճեան**